



# Հայաստանում ապաստան հայցողների տեղավորման կենտրոնի նախագծման աշխատանքների վերաբերյալ փաստաթուղթ

---

Մաչիեյ Ֆազասիսսկի  
Օգոստոս, 2016թ





## **Բովանդակություն**

Ներածություն .....	4
Մաս 1 - Ապաստան հայցողների ընդունման պայմանները՝ միջազգային և եվրոպական օրենսդրությունը, քաղաքականությունը և չափանիշները .....	7
Մաս 2 - Հայաստանում ապաստան հայցողների ընդունման պայմանները. հիմնական դիտարկումներ .....	19
Մաս 4 - Ապաստան հայցողների համար նախատեսված կոլեկտիվ տեղավորման կենտրոն. առաջարկություններ .....	35



## Ներածություն

Սույն փաստաթուղթը պատրաստվել է ԵՄ կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստանին միգրացիայի և սահմանների կառավարման ոլորտում» ծրագրի շրջանակներում, որի առանցքային բաղադրիչը, ի թիվս այլոց, Հայաստանի ապաստանի համակարգի բարելավմանն առնչվող մի շարք գործողություններն են: Ծրագրի հիմնական բաղադրիչը ապաստան հայցողների ընդունման գործող համակարգի հնարավորությունների բարելավումն է՝ ապաստան հայցողների տեղավորման ներկայիս հնարավորությունների կատարելագործման միջոցով:

Ապաստան հայցողների ընդունելության ներկայիս կենտրոնը չի համապատասխանում միջազգային բոլոր չափանիշներին և կարող է համահունչ չլինել ապաստան հայցողների ընդունելության համար անհրաժեշտ ապագա հնարավոր կարողություններին: Այդ իսկ պատճառով, ապաստան հայցողների տեղավորման կենտրոնի համար հիմնավոր ներդրումային նախագծի մշակման հարցում ծրագիրն աջակցում է Միգրացիոն պետական ծառայությանը:

Հայաստանում ապաստան հայցողների ընդունելության ներկայիս համակարգի ուժեղ և թույլ կողմերի գնահատման արդյունքում, նոր շինության կառուցման անհրաժեշտ չափանիշների հարցում, մշակվել են հստակ առաջարկներ: Այսպիսով, սույն փաստաթղթում ներկայացված է Հայաստան ժամանող և երկրում հաստատվող ապաստան հայցողների տեղավորման կենտրոնի համար ներդրումային ծրագրի մշակման քանակային ներդրումը:

Սույն փաստաթղթի մշակման համար կիրառվող հիմնական գործիքներն են՝ Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակի ուսումնասիրությունը, Հայաստան այցելություններն ու հիմնական շահառուների հետ անցկացվող հարցազրույցները (պետական հաստատություններ, Հայաստանում ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ և հասարակական կազմակերպություններ): Հիմնավորված առաջարկների մշակումը դյուրացնելու նպատակով, համեմատության կարգով, ներկայացվել է նաև Եվրոպական Միության անդամ պետություններում իրավիճակի նկարագրությունը և լավագույն գործելակերպի օրինակները:



Փաստաթուղթը կազմված է չորս մասից: Առաջին հատվածում ներկայացվում են ապաստան հայցողների ընդունման համակարգի վերաբերյալ հիմնական միջազգային օրենքը և չափանիշները: Այն, նախ և առաջ, կենտրոնացած է համապատասխան կենսամակարդակի և բնակարանով ապահովման ապաստան հայցողի իրավունքի վրա: Երկրորդ մասում հակիրճ կերպով գնահատվում է Հայաստանում առկա իրավիճակը՝ հիմնականում կենտրոնանալով ապաստան հայցողների ընդունման և կացարանով ապահովելու մասին գործող օրենքների և ընթացակարգերի վրա: Երրորդ մասում ներկայացված է Եվրոպական միության անդամ պետություններում գործող ապաստան հայցողների տեղավորման կենտրոնների լավագույն գործելակերպը: Այս հատվածում նաև սահմանված են ապագա կառույցի ներդրումային ծրագրի հիմնական տարրերը, ինչպես նաև ներկայացված են առաջարկներ՝ տեղավորման կենտրոնի արդյունավետ և ճկուն կառավարման հարցի վերաբերյալ: Վերջին մասում ներկայացված են Հայաստանում ապաստան հայցողների տեղավորման ապագա կենտրոնի վերաբերյալ առաջարկներ:

Սույն փաստաթուղթը հատուկ ուշադրություն է դարձնում խոցելի խմբում ներառված դիմորդների վիճակին, այդ թվում՝ երեխաներին, հաշմանդամներին և միայնակ մայրերին: Ցանկացած ընդունելության կենտրոն պետք է պատրաստ լինի արձագանքելու, օգնելու և աջակցություն տրամադրելու ապաստան հայցողների այս խմբին:

2016թ. հոկտեմբերին կազմակերպվեց նախագծման փաստաթղթի նախնական տարբերակին նվիրված կլոր սեղան-քննարկում համապատասխան շահագրգիռ կառույցների մասնակցությամբ: Պետական մարմինների, հասարակական ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները ներկայացրին իրենց կարծիքներն ու դիտողությունները փաստաթղթի բովանդակությանը վերաբերող առաջարկությունների և մտահղացումների մասին: Քննարկման արդյունքները հաշվի առնվեցին փաստաթղթի վերջնական տարբերակում:

Հեղինակը ցանկանում է շեշտել, որ սույն փաստաթղթում տեղ գտած՝ ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնին ներկայացվող միջազգային չափանիշներն ու կիրառվող միջազգային պրակտիկան պետք է լիովին հաշվի առնի հայաստանյան իրողությունները, պայմանները և տնտեսական իրավիճակը: Ուստի, կենտրոնի նախագիծը տնտեսապես նպատակահարմար և առկա պայմաններին համապատասխանող դարձնելու համար փաստաթղթի բովանդակության մեջ կարող են կատարվել որոշակի փոփոխություններ:



Յեղիևակը իր խորին երախտագիտությունն է հայտնում ՄԻԲՄԱ ծրագրի թիմին՝ սույն փաստաթղթի մշակման և Հայաստան իր առաքելության կազմակերպման հարցում ցուցաբերված աջակցության համար: Յեղիևակը նաև հատուկ շնորհակալություն է հայտնում Միգրացիոն պետական ծառայությանը, Հայաստանում ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակին, «Առաքելություն Հայաստանին» կազմակերպությանը և Հայկական Կարնիի Խաչին, որոնք ժամանակ գտան և աշխատանքային հանդիպում ունեցան իր հետ՝ տրամադրելով կարևոր տեղեկություններ և հանդես գալով հետաքրքիր առաջարկներով:



## **Մաս 1 - Ապաստան հայցողների ընդունման պայմանները՝ միջազգային փեյրոպական օրենսդրությունը, քաղաքականությունը փ չափանիշները**

Միջազգային օրենսդրությունը և չափանիշները պետությունների համար սահմանել են հստակ պարտավորություն՝ ապահովել իրենց տարածքում միջազգային պաշտպանություն փնտրող ապաստան հայցողների համար ընդունման պայմաններ: Յուրաքանչյուր համակարգ առնվազն պետք է ապահովի սնունդ, կացարան, բժշկական օգնություն և երեխաների համար կրթության ստանալու հնարավորություն: Տեղահանված անձինք «հատուկ պաշտպանության կարիք ունեցող, արտոնություններից զրկված և բնաչության խոցելի խումբ են» . այդ խմբին պետք է առաջարկել երեք հիմնական սկզբունքների վրա խարսխված ընդունման պայմաններ՝ ելնելով մարդկային արժանապատվության նկատմամբ հարգանքի, անձեռնմխելիության և խտրականության դեմ սկզբունքից:

խտրականության դեմ սկզբունքը հիմնարար այն երաշխիքն է, ըստ որի՝ միջազգային պաշտպանությանը դիմող բոլոր անձինք, ընդունման համակարգի տարբեր միջոցառումներից օգտվելու հնարավորությունների ընձեռման առումով, պետք է ստանան հավասար իրավունք: Ապաստան հայցողների միջև չի դրվում հիմնավոր տարբերակում իրենց ծննդավայրի, ազգային պատկանելիության, կամ դավանանքի հիման վրա: Ի լրումն նշվածի. անհրաժեշտ է ապահովել նրանց պաշտպանությունը՝ տարիքի, սեռի, ֆինանսական կարգավիճակի կամ այլ գործոնի հիման վրա՝ չզրկվելու ընդունման միջոցառումներից օգտվելու իրենց հնարավորություններից:

Մարդու արժանապատվության հանդեպ հարգանքը ապահովում է ապաստան հայցողների բարեկեցությունը : Ըստ Եվրոպական Միության արդարադատության դատարանի՝ անհրաժեշտ է հարգել և պաշտպանել մարդու արժանապատվությունը «ապաստան հայցողի պարագայում բացառել, ապաստան հայցելու մասին դիմումը ներկայացնելուց հետո նույնիսկ կարճ ժամանակահատվածի ընթացքում, այդ հրահանգով (Ընդունման պայմանները) սահմանված առնվազն չափանիշների պաշտպանությունից զրկվելու հնարավորությունը»: Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը պարզաբանել է, թե իշխանությունները լավատեղյակ են, որ ապաստան հայցողները խոցելի խումբ են: Հաշվի առնելով այդ փաստը, նրանք պետք է ապահովեն տեղահանված անձանց ընդունման հիմնական պայմանները՝ հարգելով մարդու արժանապատվությունը: Այլապես, նվաստացուցիչ կենսապայմանները, հիմնական նյութական աջակցությանից զրկված լինելը և այդ իրավիճակը փոխելու սահմանափակ հեռանկարները կարող են



համապատասխանել «Մարդու իրավունքների և հիմնարար իրավունքների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի շրջանակում ներառված խստության աստիճանին»:

Ապաստան հայցողներին անհրաժեշտ է ապահովել ֆիզիկական, հոգեբանական և էմոցիոնալ անձեռնմխելիության համար պատշաճ պայմաններ: Ընդունման համակարգը պետք է ուժեղացնի ապաստան հայցողների ինքնուրույնությունը և բարձրացնի իրենց կյանքի համար պատասխանատվության զգացումը: Մյուս կողմից, այն ապաստան հայցողների համար պետք է «խմբից դուրս գալու և սեփական հետաքրքրությունների ու կարիքների վրա կենտրոնանալու» հնարավորություն ստեղծի:

Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գործադիր կոմիտեն հաստատում է, որ ընդունման քաղաքականությունները պետք է համապատասխանեն մարդու իրավունքների մասին կիրառվող միջազգային օրենքի և չափանիշներին՝ ապաստան հայցողների համար երաշխավորելու «անվտանգ և արժանապատիվ մթնոլորտ» : Ճիշտ նախագծված ընդունման համակարգը պետք է հաշվի առնի հետևյալ բաղադրիչները՝

- Ընդունումը պետք է սկսվի ապաստան հայցելու երկիր մուտք գործելու պահից և պետք է տևի մինչև չընդունվի վերջնական որոշում:
- Պետք է երաշխավորել տարբեր տեսակի աջակցություն ստանալու հնարավորությունը: Դա նշանակում է, որ, ի թիվս այլ օժանդակության, ապաստան հայցողները պետք է հնարավորություն ունենան ստանալու սնունդ, բժշկական օգնություն, կրթություն, կացարան:
- Ապաստան հայցողների հատուկ կարիքները պետք է ամբողջովին հաշվի առնվեն և արտացոլվեն ընդունման միջոցառումներում:
- Ընտանեկան ամբողջականությունը և առանձնացվածությունը պետք է պաշտպանվի և ապահովվի:
- Բոլոր ապաստան հայցողներին պետք է տրամադրվի անձը հաստատող փաստաթուղթ:
- Ընդունման համակարգը պետք է ընդգրկի և՛ պետական գերատեսչություններ և՛ ոչ կառավարչական կազմակերպություններ, այդ թվում՝ ՄԱԿ-ի փախստականների հարցերով



գերագույն հանձնակատարի գրասենյակ և համապատասխան այլ միջազգային կազմակերպություններ :

Չնայած Փախստականների կարգավիճակի վերաբերյալ 1951 թ-ի կոնվենցիան հստակորեն չի սահմանում ապաստան հայցողների ընդունման պայմանները, սակայն, այն ներկայացնում է այն փախստականների մի շարք իրավունքները, որոնք ֆիզիկապես ներկա են մասնակից պետությունների տարածքում: ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի ձեռնարկում ասվում է, որ «(ա) անձը, 1951 թ-ի Կոնվենցիայի համաձայն համարվում է փախստական երբ նա համապատասխանում է սահմանումի չափանիշին: Դա պարտադիր կերպով պետք է տեղի ունենա, մինչև նրա փաստական կարգավիճակի պաշտոնապես որոշվելը: Քանի որ փաստական կազմավիճակը «բխում է նրա դժվարին կացության բնույթից և ոչ կարգավիճակի պաշտոնական սահմանումից », ընդունող երկիրը պետք է ապահովի ոչ պաշտոնապես ճանաչված փախստականների, այսինքն՝ ապաստան հայցողների տարրական անվտանգությունը, տրամադրի սոցիալական և ֆինանսական աջակցություն, և դա պետք է իրականացվի մինչև վերջնական որոշման ընդունումը : Յետևաբար, սոցիալական, կրթական և տնտեսական իրավունքների հետ կապված 1951 թ-ի Փաստականների կարգավիճակի մասին կոնվենցիայի մասնակից երկրների իրավունքները և պարտավորությունները նույնպես կիրառելի են այն անձանց պարագայում, որոնք հայցում են միջազգային պաշտպանություն և որոնց փաստական կարգավիճակի մասին որոշումը դեռ չի կայացվել:

1966 թ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 11(1) հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները ճանաչում են «յուրաքանչյուրի՝ իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բավարար սննդի, հագուստի ու բնակարանի, և կենսապայմանների շարունակական բարելավման իրավունքը»: Այս իրավունքը պարզ կերպով վերաբերում է յուրաքանչյուր անձին , հետևաբար՝ նաև ապաստան հայցողներին: Ուստի, տեղահանված անձանց համար ընդունման կենտրոնի հարմարությունները պետք է ապահովվեն անմիջապես ապաստանի հայցը ներկայացնելուց հետո : Կրթություն և բժշկական օգնություն, բնակարան և սնունդ ստանալու հնարավորությունը հիմնական միջոցառումներն են, որ պետք է ապահովվեն և դրանք պետք է լինեն «բավարար այն երկրի համար որտեղ նրանք (ապաստան հայցողները) դիմում են ապաստանի խնդրանքով» :

Ապաստան հայցողները հաճախ կախված են իրենց ընկերներից և բարեկամներից, իրենք չեն կարող վարձակալել բնակարաններ և տներ, նրանք նաև բախվում են հնարավոր





տանտերերի խտրականության ու թշնամությանը: Այդ պատճառով, Եվրոպական Միության արդարադատության դատարանը կարևորել է այս խմբին տրամադրվող աջակցությունը: “Աջակցությունը պետք է բավարար լինի կենսամակարդակի արժանապատիվ չափանիշները և հայցողների առաջական վիճակը, ինչպես նաև իրենց կենսապահովման նվազագույնը ապահովելու՝ ստեղծելով բնակարան ձեռքբերելու հնարավորություններ: Ցանկացած այլ իրավիճակ հանդիսանում է Ընդունման պայմանների մասին հրահանգի խախտում և հակասում է Եվրոպական Միության օրենսդրությանը:

Եվրոպական Միությունում ապաստան հայցողների շրջանում անօթևանությունը խնդիր է հանդիսանում և ունի լուրջ հետևանքներ, քանի որ «ընդունման կենտրոնների բացակայությունը հանգեցնում է աղքատության և գրկանքների ռիսկին՝ հանգեցնելով առանց ապաստանի ընթացակարգերից օգտվելու հնարավորության»: Միջազգային պաշտպանություն հայցողները չունեն «բավարար մշակութային կարողություններ անկախ կերպով մանևրելու (...) անշարժ գույքի տեղական շուկայում»: Հետևաբար, ապաստան հայցողներին կացարանով ապահովելը կարևորագույն տարր է՝ ընդունող երկրում իրենց բարեկեցությունն ու իրավական կարգավիճակը բարելավելու համար:

Համաձայն Ընդունման պայմանների մասին հրահանգի 17 (2) հոդվածի՝ անդամ պետությունները «պետք է երաշխավորեն, որ ընդունման նյութական պայմանները ապահովեն դիմորդների բավարար կենսամակարդակը, որը կերաշխավորի նրանց բարեկեցությունը և կապաշտպանի վերջինների ֆիզիկական և հոգեկան առողջությունը»: ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը շեշտում է, որ «ապաստանի հայցի արդյունավետ ներկայացման համար դա հանդիսանում է վճռական նախադրյալ, որը պետք է տրամադրվի դիմորդի կողմից միջազգային պաշտպանությանը դիմելու նրա մտադրությունը հայտնելուց անմիջապես հետո»: Այդ իսկ պատճառով, բնակարանով ապահովելու և ընդունման ընդհանուր միջոցառումները պետք է համապատասխանեն բավարար չափանիշներին: Այլապես, դա կարող է ուղղակի ազդեցություն ունենալ ապաստանի ընթացակարգի արդյունքի վրա:

Համաձայն Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի N4 Ընդհանուր եզրակացությունների՝ բավարար կացարանը նշանակում է՝ «բավարար առանձնացվածություն, բավարար անվտանգություն, բավարար լուսավորում և օդափոխություն, բավարար հիմնական ենթակառուցվածքներ (...)»: Այսպիսով, ապաստան հայցողների համար նախատեսված բոլոր կոլեկտիվ բնակարանային կենտրոնները պետք է համապատասխանեն այս նվազագույն չափանիշներին՝ երաշխավորելով



Ենթակառուցվածքներից և հիմնական միջոցներից օգտվելու հնարավորությունը, այդ թվում՝ բժշկական օգնությունից և սպասարկումից օգտվելու և կրթություն ստանալու հնարավորությունը: Ավելին, բնակարանային կենտրոնները պետք է լինեն «տնտեսապես հնարավորինս մատչելի» և հարգեն տարբեր մշակութային և կրոնական հայացքներ ունեցող կենտրոնի բնակիչների հայացքները: Վերջապես, տեղավորման կենտրոնը «պետք է ընդգրկի համապատասխան միջոցներ տեղական համայնքների հետ ներդաշնակ հարաբերություններ ստեղծելու համար»: Շատ կարևոր է ապահովել, որպեսզի բնակիչներին տրամադրվող ծառայությունները չլինեն մեկուսացած և ինքնապարփակ, այլ լինեն ընդունող համայնքի հետ փոխկապակցված: Ապաստան հայցողներին պետք է տրամադրվի նախաինտեգրման աջակցություն, օրինակ՝ լեզվի ուսուցման դասընթացներ, կողմնորոշման դասընթացներ, իրավական աջակցություն և համայնքի զարգացմանը աջակցելու հնարավորություն:

Ընդունման պայմանների մասին հրահանգում Եվրոպական Միության անդամ պետությունների համար սահմանվում են ապաստան հայցողների ընդունման միջոցառումների չափանիշները: Հրահանգի 2(f) հոդվածում ընդունման պայմանները սահմանվում են որպես «միջոցառումների ամբողջական կազմ, որը անդամ պետությունը տրամադրում է ապաստան հայցողներին: Միջոցառումներն ընդգրկում են այնպիսի նյութական միջոցներ, ինչպիսիք են՝ բնակարան/կացարան, սնունդ և հագուստ, որոնք տրամադրվում են կա՛մ առձեռն, կա՛մ ֆինանսական նպաստի, կա՛մ վաուչերների տեսքով, կամ էլ երեքի համադրությամբ, ինչպես նաև առօրյա ծախսերի համար նախատեսված գումար»: Ընդունման պայմանները, այնուամենայնիվ, չեն սահմանափակվում այդ երեք բաղադրիչներով. Հրահանգի համաձայն՝ անդամ պետությունները պետք է նաև ապահովեն անվտանգությունը, ընթացակարգերի իրականացումը և անցկացնեն առաջարկված պայմանների իրականացման մոնիթորինգ:

ԵՄ անդամ պետությունները պետք է մշակեն ապաստան հայցողների ընդունման համար համեմատելի կենսապայմաններ և «չափանիշներ որոնք բավարար կլինեն երաշխավորելու արժանապատիվ կենսամակարդակ»: Համաձայն Ընդունման պայմանների մասին հրահանգի 18(1) հոդվածի բնակարանը կարող է տրամադրվել երեքից մեկի ձևով: Դրանցից մեկն է «կենսամակարդակի արժանապատիվ չափանիշ երաշխավորող տեղավորման կենտրոնը»: Ապաստան հայցողները կարող են նաև օգտվել «մասնավոր տներից, բնակարաններից, հյուրանոցներից կամ բնակավայրերից, որոնք հարմարեցված են ապրելու համար»:



Բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի իրավունքը , ուղղակի կերպով կապված է անձնական կյանքի, ընտանիքի, բնակարանի կամ նամակագրության նկատմամբ կամայական միջամտությունից պաշտպանվելու իրավունքի հետ : Ընդունման պայմանների մասին հրահանգի 18(2)(ա) հոդվածը նաև երաշխավորում է ընտանեկան կյանքի պաշտպանվածություն: Հոդվածով սահմանվում է «ընտանեկան միասնության սկզբունքի (ինչպիսին, որ այն կա) հանդեպ հարգանքը՝ փախստականների ընտանիքի պաշտպանության հիմնական միջոցներից մեկն է»: Ընդհանուր առմամբ, ընտանիքի անդամներին պետք է հատկացվի ընդհանուր կացարան, հակառակ դեպքում, դա կարող է բացասական ազդեցություն ունենալ, մասնավորապես, երեխաների բարեկեցության և զարգացման վրա:

Չնայած Ընդունման պայմանների մասին հրահանգով սահմանված են ընտանեկան կյանքի պաշտպանության համար անհրաժեշտ գործողությունները, ընտանիքի անդամի մասին սահմանումը շատ նեղ է: Համաձայն 2(գ) հոդվածի՝ այն սահմանափակվում է զույգով, 18 տարեկանից ցածր երեխաներով կամ չամուսնացած երեխայի ծնողներով: Ավելին, ընտանիքը պետք է արդեն ձևավորված լինի ծագման երկրում, այսինքն՝ սկզբունքը «անտեսում է այն փաստը, որ ապաստան հայցողներից շատերն ընտանիք են կազմում իրենց ծագման երկիրը արդեն իսկ լքելուց հետո՝ ընդունող երկիր ժամանալու ընթացքում»: Համաձայն Փախստականների և աքսորված անձանց եվրոպական խորհրդի (ECRE)՝ «ընտանիքի այս նեղ մեկնաբանումը կարծես թե չի համապատասխանում ԵՄ Օրենսդրության 7-րդ հոդվածով սահմանված ընտանիքի գաղափարին, որը չի պարունակում որևէ սահմանափակում ընտանեկան կյանքի հանդեպ»:

Ապաստան հայցողների ընդունման հետ կապված միջոցառումները պետք է արձանագրեն խոցելի խմբում ընդգրկված ապաստան հայցողների կարիքները: Համաձայն Ընդունման պայմանների մասին հրահանգի 21-րդ հոդվածի՝ երեխաներին, առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված անչափահաս ապաստան հայցողներին, հղի կանանց, մեծահասակ անձանց, երեխաների հետ միայնակ ծնողներին, խոշտանգումներից, վնասվածքներից կամ հոգեբանական, ֆիզիկական ու սեռական բռնությունից, մարդկանց թրաֆիկինգից փրկված անձանց կամ լուրջ հիվանդությունից տառապող անձանց պետք է տրամադրվի հատուկ խնամք և օգնություն: Սակայն, ըստ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի դիտարկման՝ Ընդունման պայմանների մասին հրահանգը չի ներառում Լեսբուհիներին, Գեյերին, Բիսեքսուալներին և Տրանսգենդերներին (LGBT), անգրագետ ապաստան հայցողներին և տեսողության ու լսողության խախտումներ ունեցող անձանց: Հրահանգում նշված ապաստան հայցողների խոցելի խմբում նույնպես ներառված չեն անաշխատունակ և խնամքի տակ գտնվող մեծահասակ անձինք:



«Ազգային իշխանությունները պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնեն հատուկ ընդունման կարիք ունեցող մարդկանց ընդունման պայմաններին՝ ապահովելու, որպեսզի նման ընդունումը ընդգծված նախատեսված լինի բավարարելու նրանց հատուկ ընդունման կարիքները»: Համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ ապաստան հայցող երեխաներին «հաշվի առնելով նրանց հատուկ կարիքները և խոցելիության չափազանց բարձր աստիճանը, պետք է երաշխավորվի հատուկ պաշտպանություն»: Ըստ այդմ, ապաստան հայցող երեխաների ընդունման պայմանները պետք է համապատասխանեցվեն իրենց տարիքին, նաև պետք է երաշխավորվի, որ այդ պայմանները չեն «ստեղծի իրենց համար տրավմատիկ հետևանքներով սթրեսային և անհանգստության իրավիճակ»: (...) Այլապես, ինդրահարույց պայմանները կարող են անցնել Մարդու իրավունքների արդարադատության դատարանի 3-րդ հոդվածով սահմանված արգելքների շրջանակում նախանշված խստության շեմը: Այդ իսկ պատճառով, իշխանությունները պետք է երաշխավորեն, որ երեխաներին չթողնեն առանց բնակարանի կամ տեղավորեն գերբնակեցված կենտրոններում: Երեխաներին անհրաժեշտ է ապահովել առանձնաձեռնություն և երաշխավորել, որ նրանք չեն ենթարկվի բռնության կամ ապրեն անառողջ պայմաններում: Տեղավորման կենտրոնների պայմանները պետք է հարմարեցված լինեն երեխաների տարիքին և կարիքներին, ինչպես նաև ապահովեն ընտանիքի միասնությունը:

Ըստ Ընդունման պայմանների մասին հրահանգի՝ «բնակարան հատկացնելուց» անհրաժեշտ է հաշվի առնել երեխայի բարձրագույն շահերի սկզբունքը: Այդ իսկ պատճառով, ընտանեկան միասնությունը պետք է պաշտպանվի ու պահպանվի, և ընդհանուր առմամբ, երեխաներին պետք է տեղավորել իրենց ծնողների կամ ինամակալների ու քույրերի կամ եղբայրների հետ: Նաև կարևոր է «հասեցագրել, մասնավորապես, հատուկ կրթական, բժշկական, հոգաբանական, զվարճության և այլ հատուկ կարիքների հոգաձուլությունը»:

Հատուկ ուշադրություն և վերաբերմունք պահանջող ապաստան հայցող կանանց խումբն է, և, մասնավորապես՝ հղի կանանց: Սեռական բռնության և դաժան վերաբերմունքի առումով կանայք ավելի խոցելի են: Այսպիսով, ֆիզիկական անվտանգությունը տեղավորման կոլեկտիվ կենտրոններում հատուկ ուշադրության է արժանանում: Ըստ Ընդունման պայմանների մասին հրահանգի 18(4) հոդվածի՝ «համապատասխան միջոցառումներ են ձեռնարկվում կանխելու հարձակումը և գենդերային բռնությունը, այդ թվում՝ սեռական հարձակումը և ոտնձգությունը»: Կանանց անհրաժեշտ է տեղավորել հատուկ հատվածներում և շենքերում՝ սահամանափակելով ոչ լիազորված անձանց մուտքը,



այդ թվում կենտրոնի մնացած բնակիչների համար: Ցանկացած տեղավորման կենտրոնում կամ կացարանում պետք է ապահովվի անվտանգությունը և առանձնացվածությունն ընդհանուր այնպիսի վայրերում, ինչպիսին ընդհանուր լոգարան է:

Բնակարանով ապահովման հարցում սեռը պետք է լինի որոշիչ սկզբունք: Համաձայն Ընդունման պայմանների մասին հրահանգի 18(3) հոդվածի՝ «տեղավորման կենտրոնում ապաստան տրամադրելուց, անհրաժեշտ է հաշվի առնել սեռը, տարիքը և խոցելի անձանց իրավիճակը բնակարաններում: Կանայք պետք է ապահովվեն պատշաճ բժշկական աջակցությամբ և վերարտադրողական առողջության վերաբերյալ խորհրդատվություն ստանալու հնարավորություններով»:

Մեծահասակ ապաստան հայցողները զրկված են իրենց ծագման երկրներում առկա ընտանիքի անդամների և ցանցերի աջակցությունից: Հաճախ նրանք լքված են, ապաստան տրամադրող երկրում գտնվում են աղքատ ու չբավոր վիճակում և կարող են տեղյակ չլինել իրենց իրավունքների ու առկա ծառայությունների մասին: Այդ իսկ պատճառով, նրանք հատուկ միջոցառումների և խնամքի կարիք ունեն, որը պետք է կազմակերպվի այնպես, որ շահառուները առանձնացված չլինեն այլ ապաստան հայցողներից, որոնք ապրում են կոլկտիիվ տեղավորման կենտրոններում: Ավելին, ելնելով իրենց տարիքից և առողջական վիճակից՝ նրանք կարող են պահանջել բժշկական խնամք և հատուկ օգնություն, այդ թվում՝ հոգեբանական խորհրդատվություն:

Մարդկանց թրաֆիքինգից փրկվածների ընդունման առումով անհրաժեշտ է ներդնել այնպիսի մեխանիզմ, որի միջոցով կտրամադրվեն ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական վերականգնման ծառայություններ: Դրանք ներառում են՝ բնակարանով ապահովում, իրավաբանական խորհրդատվության և տեղեկատվության տրամադրում, բժշկական, հոգեբանական ու նյութական աջակցություն, ինչպես նաև աշխատանք գտնելու, կրթություն և վերապատրաստում ստանալու հնարավորությունների ընձեռում՝ հաշվի առնելով մարդկանց թրաֆիքինգից փրկվածների տարիքը, սեռը և հատուկ կարիքները: Մարդու թրաֆիքինգից փրկված անձանց բնակարանով ապահովելու հիմնական տարրերից մեկը՝ հետագա վնասից պաշտպանությունը և անձեռնմխելիությունն է: «Առանձնության և անձեռնմխելիության պաշտպանություն ապահովելու անկարողությունը կարող է մեծացնել ահաբեկվածության և փոխվրեժի վտանգը»: Կարևոր է ապահովել աջակցող և անվտանգ մթնոլորտ, որն երբեմն կարելի է ապահովել միայն տեղավորման կենտրոններից դուրս, մասնավորապես՝ հատուկ



Նախապատրաստված կացարանում, որը ավելի հագեցված է բժշկական և հոգեբանա-սոցիալական կարիքերը բավարարող սարքավորումներով և կարող է հոգ տանել մարդկանց թրաֆիքինգից փրկված անձանց նկատմամբ:

Նմանապես՝ վնասվածքներից, խոշտանգումից և սեռական ոտնձգությունից փրկված անձինք պետք է «նշյալ գործողությունների հետևանքով պատճառած վնասի դիմաց ստանան անհրաժեշտ օգնություն, մասնավորապես՝ համապատասխան բժշկական և հոգեբանական բուժումից կամ ինսամբից օգտնվելու հանարվորություններ»: Այդ պատճառով ընդունման կենտրոնը պետք է հագեցված լինի համապատասխան միջոցներով՝ նման կարիքները բավարարելու համար: Համաձայն Ընդանման պայմանների մասին հրահանգի 19(2) հոդվածի՝ հատուկ ընդունման կարիք ունեցող դիմորդներին պետք է տրամադրվի անհրաժեշտ բժշկական օգնություն և սպասարկում, այդ թվում՝ հոգաբանական բժշկական օգնություն:

ԼԳԲՏ ապաստան հայցողները, ապաստան տրամադրող երկիր ժամանելուց հետո, կարող են կանգնել ֆիզիկական և հոգեբանական վնաս ստանալու վտանգի առաջ: Նրանք նաև «կարող են սեռական բռնության և շահագործման, մարգինալացման ու արհամարհանքի բարձր ռիսկի առաջ կանգնել»: Այդ իսկ պատճառով, հիմնականում անվտանգության նկատառումներից ելնելով, նրանք կարող են հատուկ ընդունման աջակցության կարիք ունենալ, այդ թվում՝ անվտանգ բնակարանի, հոգեբանական աջակցության, բժշկական օգնության և պաշտպանության: Եթե ԼԳԲՏ անձինք ապաստանում են տեղավորման կենտրոններում, անհրաժեշտ է ապահովել հատուկ անվտանգություն և իրականացնել մոնիթորինգ:

Համաձայն Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի 20-րդ հոդվածի՝ առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված ապաստան հայցող անչափահասները պետության կողմից տրամադրվող հատուկ պաշտպանության և օգնության իրավունք ունեն: Այդ երեխաները ենթարկվում են ֆիզիկական և հոգեբանական բռնության, դաժան վերաբերմունքի, արհամարհանքի կամ սեռական շահագործման: Նույնիսկ եթե երեխան 16 տարեկանից բարձր է, նրան չպետք է վերաբերվել ինչպես փաստացի չափահաս և այսպիսով տեղավորել այլ ապաստան հայցողների հետ միասին տեղավորման կենտրոնում: Ուստի, այդպիսի երեխաներին պետք է տեղավորել առանձին կենտրոնում, որդեգրող ընտանիքներում կամ այդ խմբի հատուկ պաշտպանության և ընդունման կարիքներով զբաղվող հաստատություններում: Ըստ Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի



22-րդ հոդվածի՝ միայն այդ միջոցառումները կարող են ապահովել այս երկու պայմանների իրականացումը: Ավելին, ըստ երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի 27 հոդվածի՝ «Մասնակից պետություններն ընդունում են, որ յուրաքանչյուր երեխա իր ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական և սոցիալական զարգացման համար ունի անհրաժեշտ կենսամակարդակի իրավունք» : Այդ թվում՝ տրամադրվում է պատշաճ նյութական օժանդակություն և իրականացվում են աջակցող ծրագրեր: Կառավարության կարողությունների սահմանափակ լինելու դեպքում, այն պետք է ընդգրկի հատուկ ոչ կառավարչական և կառավարչական կազմակերպություններին՝ բավարար կենսամակարդակ երաշխավորելու նպատակով: Անհրաժեշտ է, որպեսզի երեխաների մշակութային, լեզվաբանական և կրոնական կարիքները հաշվի առնող հատուկ վերապատրաստված մասնագետները հատուկ աջակցություն տրամադրեն ժամանակավորապես կամ մշտապես իր ընտանեկան շրջապատից զրկված կամ իր լավագույն շահերի տեսակետից այդպիսի շրջապատում մնալ չկարողացող ապաստան հայցող երեխաներին: Այս անձինք պետք է արձագանքեն այդպիսի երեխաների ընդունման կարիքներին: Եվ վերջապես, բնակարանով ապահովելուց՝ այդ երեխաներին պետք է տեղավորել իրենց եղբայրների և քույրերի հետ միասին:

«Հաշմանդամություն ունեցող անձ՝ անձ, ով ունի ֆիզիկական, հոգեկան, մտավոր և զգայական ոլորտների երկարաժամկետ կամ կայուն սահմանափակումներ, որոնք, բախվելով տարբեր միջավայրային արգելքներին, խոչնդոտում են նրա՝ մյուսների հետ հավասար հիմունքներով, լիարժեք ու արդյունավետ մասնակցությանը հասարակական կյանքին»: Համաձայն Փախստականների հարցերով գործադիր կոմիտեի՝ «հաշմանդամություն ունեցողների հատուկ կարիքները հաճախ անտեսվում են (...) և (...) մասնավորապես կանայք, երեխաները և հաշմանդամություն ունեցող անձինք ենթարկվում են խտրականության, շահագործման, բռնության, այդ թվում՝ սեռական ու գենդերային բռնության, և կարող են զրկված լինել աջակցությունից ու անհրաժեշտ ծառայություններից» : Այդ իսկ պատճառով, իշխանությունները պետք է հատուկ ուշադրության արժանացնեն ապաստան հայցողների այս խմբի պաշտպանության հարցը և «ապահովեն, որ հաշմանդամություն ունեցող անձինք հնարավորություն ունենան օգտվելու բոլոր հիմնական ծառայություններից ու ծրագրերից, ինչպես նաև հատուկ ծառայություններից»: Վերը նշվածը նաև վերաբերում է «ողջամիտ բնակարան» հասկացությանը, ինչը նշանակում է՝ «անհրաժեշտ հատուկ դեպքերում համապատասխան փոփոխությունների կամ շտկումների կատարում, որոնք չեն պահանջում անտեղի ջանքեր՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց մյուսների հետ հավասար հիմունքներով մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից օգտվելն ու դրանք կիրառելը»: Ընդունման պայմանների մասին հրահանգը չի պարունակվում որևէ հատուկ պայման



հաշմանդամություն ունեցող անձանց մասին: Միայն, ըստ 18(5) հոդվածի՝ պահանջվում է կախում ունեցող ծեր անձանց տեղավորել մեծահասակների խնամք ապահովող անձանց, ընտանիքի անդամների կամ բարեկամների հետ:

„Չաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան ուղղակի վերաբերում է ապաստան հայցողներին, քանի որ Կոնվենցիայի 4(1) հոդվածում հստակ նշված է, որ «Մասնակից պետությունները պարտավորվում են ապահովել և օժանդակել հաշմանդամություն ունեցող անձանց՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների լիակատար իրականացմանը՝ առանց հաշմանդամության պատճառով որևէ խտրականության»: Անդամ պետությունները պետք է ապահովեն մի շարք այնպիսի հիմնական սկզբունքների իրագործումը, ինչպիսիք են՝ խտրականության բացառումը, հարգանքը արժանապատվության, անհատի ինքնուրույնության նկատմամբ, հանրային կյանքին լիակատար և արդյունավետ մասնակցությունն ու ներգրավվածությունը, հարգանքը հաշմանդամություն ունեցող անձանց յուրահատուկ լինելու նկատմամբ և նրանց՝ որպես մարդկային բազմազանության և մարդկության մասնիկ ընդունելը: Նրանք պետք է նաև պաշտպանեն հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական և մտավոր անձեռնմխելիությունը: Ավելին, ըստ Կոնվենցիայի՝ անդամ պետությունները պետք է «ձեռնարկեն համապատասխան միջոցներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և կյանքի բոլոր բնագավառներում լիակատար մասնակցության հնարավորություն ընձեռնելու նպատակով», ինչպես նաև ապահովեն «կառույցների, ճանապարհների, փոխադրամիջոցների, տեղեկատվության, հաղորդակցության և այլ ծառայությունների՝ ներառյալ էլեկտրոնային ծառայությունները, մատչելիությունը»:

Կառույցների, ճանապարհների, փոխադրամիջոցների, բացօթյա և փակ հաստատությունների նկատմամբ արգելքները պետք է վերացվեն և հանրային նշանակության կառույցներում, իսկ հաստատություններում Բրայլի համակարգը կիրառելու համար դյուրընթացելի ու հասկանալի նշաններ տեղադրվեն: Չաշմանդամություն ունեցող անձինք պետք է անկախ ապրելու հնարավորություն ունենան և մյուսների հետ հավասար հիմունքներով՝ ընդգրկվել և մասնակցել հասարակական կյանքում: Վերջապես, «Չաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան շեշտում է այս խմբի կենսապահովման բավարար մակարդակ ունենալու իրավունքը, որը պետք է ապահովի «մատչելի և համապատասխան ծառայությունների, սարքավորումների և այլ աջակցության մատչելիությունը՝ հաշմանդամությանն առնչվող կարիքների և սոցիալական պաշտպանության համար»:





ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակն ընդգծել է, որ անհրաժեշտ է ապահովել ապաստան հայցողների նկատմամբ վերաբերմունքին առնչվող մի շարք միջոցառումներ: Այս միջոցառումները վերաբերում են ոչ միայն բնակարանով և սննդով ապահովմանը, այլև ընդգրկում են իրավաբանական խորհրդատվություն, կրթության, վերապատրաստման և կողմնորոշման դասընթացների մատչելիություն: Համաձայն Ընդունման պայմանների մասին հրահանգի՝ ապաստան հայցողները պետք է ունենան «բարեկամների, իրավական խորհրդատուների, ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի ներկայացուցիչների և այլ համապատասխան ազգային, միջազգային և ոչ կառավարչական կազմակերպությունների և մարմինների հետ շփվելու հնարավորություն»: Շփումն այդ կարող է սահմանափակվել միայն հատուկ պայմանների ներքո: Ավելին, համաձայն հրահանգի 14-րդ հոդվածի՝ ԵՄ անդամ պետությունը պետք է ապահովի ապաստան հայցող երեխաների համար կրթության մատչելիությունը(միջազգային պաշտպանության համար հայցը ներկայացնելուց առնվազն 3 ամսվա ընթացքում)՝ ապաստան տրամադրող երկրի քաղաքացիների համար նախատեսված պայմաններով: Երեխաները, դպրոց գնալուց առաջ, կարող են նաև հաճախել նախապատրաստական և լեզվի դասընթացների: Ընդունման պայմանների մասին հրահանգի ներքո, ապաստան հայցողները պետք է ստանան նաև անհրաժեշտ բժշկական օգնություն և սպասարկում, ինչը ներառում է ոչ միայն շտապ օգնությունը, այլև «հիվանդությունների ու լուրջ հոգեբանական խանգարումների բուժումը»: Արդեն նշվել է, որ տեղահանված անձանց ընդունման պատշաճ պայմաններով ապահովումը կարևոր է վերջինների բարեկեցության և ապաստանի ընթացակարգի արդյունքի համար. այդ իսկ պատճառով, իշխանությունները պետք է հաշվի առնեն թերզարգացած ընդունման համակարգի հնարավոր հետևանքների ազդեցությունը ապաստան հայցողների վիճակի վրա:



## **Մաս 2 - Հայաստանում ապաստան հայցողների ընդունման պայմանները. հիմնական դիտարկումներ**

Հայաստանում ապաստան հայցողների ընդունման պայմանների միջոցառումները ներկայացված են հետևյալ ակտերում և կանոնակարգերում՝

- “Փախստականների և ապաստանի մասին” ՀՀ օրենք, No-221-N առ 2008թ, վերջին փոփոխություններով:
- ՀՀ որոշում ապաստան հայցողներին ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորելու և կենսաապահովման պայմաններ տրամադրելու կարգը հաստատելու մասին (#1440N, 2009թ., նոյեմբերի 19), (այսուհետ՝ ԺՏԿ-ում ապաստան հայցողներին տեղավորելու կարգ):
- ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության պետի հրաման: Ապաստան հայցողներին ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորելու և կենսաապահովման պայմաններ տրամադրելու կարգի նկարագիր (2013թ., դեկտեմբեր), (այսուհետ՝ ԺՏԿ-ում տեղավորելու կարգ):

Համաձայն «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 14(1) հոդվածի՝ «Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնը (այսուհետ՝ ժամանակավոր տեղավորման կենտրոն) հատուկ հաստատություն է, որտեղ լիազոր մարմինը տեղավորում է ապաստան հայցողներին մինչև նրանց ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը», այն պետական կառույց է, որը ապաստանի կարգով նախատեսված է տեղահանված անձանց տեղավորելու համար: Դիմողները կարող են մնալ այնտեղ մինչև նրանց ապաստանի հայցի վերաբերյալ կայացվի վերջնական որոշում: Կենտրոնը գտնվում է Երևանում և կարող է տեղավորել 45 անձ:

Սակայն, ՀՀ օրենքը չի պարզաբանում, որ իշխանությունները պարտավոր են բնակարանով ապահովել պետության տարածքում գտնվող ապաստան հայցողներին: «Բնակարանի կարիք ունեցող» գործածվող արտահայտությունը պարզ չէ: Նախ, այն բաժանում է հայցողներին երկու խմբի. նրանց՝ որոնք ունեն բնակարանի կարիք, և նրանց՝ որոնք չունեն այդ կարիքը: Կան ապաստան հայցողներ, որոնք ապրում են իրենց բարեկամների կամ ընկերների տանը, և այսպիսով փաստացի չունեն բնակարանի կարիք: Սակայն, համաձայն միջազգային օրենքի և չափանիշների, բոլոր ապաստան հայցողները իրավունք ունեն բավարար կենսամակարդակի իրավունք, այդ թվում՝ ապաստարանի: Այս իրավունքը



կախված չէ անձի իրավիճակից և ընտանիքի կամ ընկերների կողմից առաջարկվող աջակցությունից: Ավելին, հոդված 14(1) կիրառված արտահայտությունից կարելի է եզրակացնել, որ միայն «բնակարանի կարիք ունեցող» անձանց է հարկավոր տեղավորել պետական կառույցում: Հետևաբար, այն նշանակում է, որ պետք է անցկացվի ապաստան հայցողների բնակարանային իրավիճակի գնահատում, որպեսզի միայն ԺՏԿ-ում տեղավորվեն «բնակարանի կարիք ունեցող» անձիք: Օրենքը, սակայն, չի սահմանում թե ով պետք է պատասխանատվություն կրի նման գնահատում իրականացնելու համար, և ինչ հիմունքներով այն պետք է անցկացվի: Վերջապես, որոշ ապաստան հայցողներ կարող են բախվել հետևյալ փաստի հետ՝ եթե նույնիսկ նրանք «չունեն բնակարանի կարիք», միևնույն է միայն ԺՏԿ-ում տեղավորված հայցողներն իրավունք ունեն ստանալու կառավարության կողմից տրամադրվող ֆինանսական աջակցություն և նպաստ՝ համաձայն «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 14 և 24 հոդվածների:

Համաձայն «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի հոդված 14(2)-ի, ԺՏԿ-ում տեղավորման անհնարինության դեպքում այն ապաստան հայցողներին, որոնք կենսաապահովման հիմնական կարիքները հոգալու հնարավորություն չունեն, տրամադրվում է դրամական օգնություն: Վերջերս ՀՀ կառավարության կողմից ընդունված՝ ԺՏԿ-ում տեղավորման անհնարինության դեպքում կենսաապահովման հիմնական կարիքները հոգալու հնարավորություն չունեցող ապաստան հայցողներին դրամական օգնություն տրամադրելու կարգի համաձայն դրամական օգնության չափը դիմումատուի համար կազմում է 20.000 դրամ, իսկ նրա ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար՝ 15.000-ական դրամ: Դրամական օգնությունն ապաստան հայցողին և նրա ընտանիքի անդամներին տրամադրվում է առաջինիս կողմից ներկայացվող դիմումի հիման վրա՝ առավելագույնը 3 ամիս ժամկետով (երկարաձգման հնարավորությամբ): Վերոնշյալ կարգի 7-րդ կետի համաձայն, հատուկ ստեղծված աշխատանքային խմբի կողմից կատարվում է կենսաապահովման հիմնական կարիքների գնահատման ուսումնասիրություն՝ նրանց փաստացի բնակության վայր այցելության միջոցով: Ուսումնասիրությունը կատարած անձանց կողմից կազմվում է ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ ակտ, որի հիման վրա էլ ընդունվում է դրամական օգնություն տրամադրելու մասին որոշումը: Դա ենթադրում է, որ դիմումատուն պետք է բնակվելիս լինի բնակարանում կամ այլ բնակելի տարածքում, ինչը նշանակում է, որ նա ապահովված է բնակարան վարձելու համար բավարար ֆինանսական միջոցներով մինչև օգնության համար դիմելը: Բացի այդ, կարգով չեն նախատեսվում որևէ ցուցումներ ԺՏԿ-ում չտեղավորված և անգամ շատ կարճ ժամկետով բնակարանի վարձակալության համար ֆինանսական միջոցների չտիրապետող անձանց վերաբերյալ: Ոչ օրենքով, ոչ էլ վերոնշյալ կարգով հստակ սահմանված չեն որևէ դրույններ բնակարանավորման այլընտրանքային տարբերակների կամ անվտանգության, առողջության կամ անձնական այլ կարևոր դրդապատճառներով տեղավորման



կենտրոնում չտեղավորված անձանց վարձակալության նպաստ տրամադրելու հնարավորության վերաբերյալ: Այսպես, ԺՏԿ-ից դուրս:

Ըստ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի ու համապատասխան ընթացակարգերի՝ գործող ընդունման համակարգի շրջանակում ապաստան հայցողներին տրամադրում են սնունդ (օրական երեք անգամ): Հետևաբար, այլ տարբերակները, ինչպիսիք են՝ ֆինանսական սուբսիդիաները կամ վաուչերները, օրենքով նախատեսված չեն: Ավելին, ապաստան հայցողներին ԺՏԿ-ում տեղավերելու մասին ընթացակարգի 19-րդ կետը և ԺՏԿ-ում տեղավորման մասին ընթացակարգի 5.4-րդ կետը չեն համապատասխանում «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքին: «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 24(1) հոդվածում նշվում է, որ ապաստան հայցողներին տրամադրվում է օրական երեք անգամ սնունդ, իսկ կետ 19-ում և կետ 5.4-ում նշված է, որ բնակիչները ստանում են սնունդ ամսական երեք անգամ:

Սույն փաստաթղթերով առաջարկվում է Հայաստանում ներդնել ֆինանսական նպաստի և/կամ սննդի համար նախատեսված վաուչերի տրամադրման համակարգը: Դա փոփոխություններ կպահանջի գործող օրենքում և ընթացակարգերում: Ավելին, ըստ գործող ընթացակարգերի՝ սննդի մթերաբաժինը տրամադրվում է՝ «համաձայն ծեր և հաշմանդամություն ունեցող անձանց տրվող սոցիալական ծառայությունների նվազագույն չափանիշների»: Հետևաբար, դրանք չեն համապատասխանում երեխաների, կանանց և տղամարդկանց սննդակարգի կարիքներին, ինչպես նաև հնարավորություն չեն ընձեռում բաժանել սնունդ՝ ըստ մշակութային և կրոնական առանձնահատկությունների: Հաշվի առնելով միջազգային օրենսդրությունը և չափանիշները՝ այս պայմանները նույնպես պետք է փոփոխվեն մշակութային և սննդակարգի առանձնահատկություններին համապատասխանեցնելու համար, ինչպես նաև տրամադրվի սնունդ, որը հարմարեցված է մեծահասակների, դեռահասների և երեխաների կարիքները բավարարելուն:

Ապաստան հայցողներն ունեն բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք՝ ՀՀ քաղաքացիների հետ հավասար հիմունքներով: Նրանք կարող են օգտվել ինչպես պետության կողմից երաշխավորված՝ առաջնային առաջնային պահպանման անվճար ծառայություններից, այնպես էլ հատուկ մասնագիտական բժշկական ծառայություններից՝ ներառյալ հոգեբուժական օգնությունը:

Ապաստան հայցողների խոցելի խմբի սահմանումն ու հայցողների այս խմբի ընդունման մասին համապատասխան պայմանները վերջերս ներառվել են ՀՀ օրենքում: Համաձայն «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 8(1) հոդվածի՝ ապաստան հայցողների



խոցելի խումբ են համարվում «երեխաները, հաշմանդամություն ունեցող անձինք, ծերերը, հղի կանայք, անչափահաս երեխաներ ունեցող միայնակ ծնողները, թարֆիքինգից փրկված, լուրջ, սուր հիվանդություններից տառապող, հոգաբանական խախտումներ ունեցող և խոշտանգումներից, բռնաբարությունից կամ բռնության այլ տեսակներից տուժված անձինք»: Այսբանով, սակայն, ցանկը վերջանում է և չի ներառում՝ օրինակ ԼԳԲՏ, անգրագետ կամ անաշխատունակ անձանց: Բացի այդ, «լուրջ, սուր հիվանդություն» արտահայտությունը չի արտացոլում «լուրջ» բառի բուն նշանակությունը:

Չաշվի առնելով այն, որ «Փախստականների և ապաստանի մասին» օրենքում սահմանվում է ապաստան հայցողների խոցելի խումբ հասկացությունը՝ ֆինանսական աջակցության հետ կապված ընդունման պայմանները այդ խմբին չեն վերաբերում: Դա պահանջում է լրացուցիչ փոփոխություններ մտցնել, մասնավորապես, գործող ընթացակարգերում: Փոփոխություններն այդ պետք է վերաբերեն բնակարանով ապահովման այլընտանքային տարբերակներին, օրինակ՝ առաջարկել թրաֆիքինգից տուժված անձանց համար տեղավորման այլընտրանքային տարբերակներ: Խոցելի խմբում ընդգրկված հայցողների առողջական և հոգեբանական բուժման հասանելիության խնդրում կարելի է լրացուցիչ պայմաններ ավելացնել:

Չամաձայն «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 8(2) և 8(3) հոդվածների՝ առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված անչափահասները ընդգրկվում են խոցելի հայցողների խմբում: Ավելին, համաձայն 24(1) հոդվածի՝ նրանց «առաջնահերթության սկզբունքով տեղավորում են ԺՏԿ-ում, վերջինների ներկայացուցչի խորհրդատվությունից հետո՝ հաշվի առնելով նրանց բարձրագույն շահերը»: Այս պահանջում առկա է բացառություն. համաձայն 50(5) հոդվածի՝ երեխային կարելի է տեղավորել այլ կացարանում եթե ԺՏԿ-ը չի համարվում հարմար կացարան: Այնուամենայնիվ, ըստ 24(1) հոդվածի՝ առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված բոլոր անչափահասները պետք է տեղավորվեն ԺՏԿ-ում: Սակայն, նման պայմանը համահունչ չէ միջազգային չափանիշներին և երեխայի բարձրագույն շահի սկզբունքին: Չաշվի առնելով նշված հանգամանքը, օրենքը պետք է նախատեսի այս խմբի այլընտրանքային տեղավորման միջոցառումներ: Դա նշանակում է, որ «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 24-րդ և 50-րդ հոդվածները պետք է համապատասխանորեն փոփոխվեն:

Չամաձայն ԺՏԿ-ում տեղավորման մասին կարգի կետ 4.11-ի՝ ներկայացվում է բոլոր սենյակների կահավորման կահույքի ցանկը: Ներկայիս ցանկը ավարտուն չէ. կիրառվում է



«և այլն» արտահայտությունը, որով պարզ չէ, թե ինչ կահույք է անհրաժեշտ: Ցանկն այս պետք է լինի մանրամասն՝ ընդգրկելով կահույքի բոլոր կտորները: Ավելին, 4.11 կետը չի համապատասխանում կարգի 5.1 կետին, որտեղ սահմանվում է, որ «յուրաքանչյուր սենյակի համար տրամադրվում է սեղան, նստարան կամ աթոռներ, հագուստի կախիչներ, հագուստի պահարաններ և տնային տնտեսության այլ պարագաներ, աղբաման, մաքրման պարագաներ և այլ իրեր»:

Թե՛ «Փախստականների և ապաստանի մասին» օրենքը, թե՛ համապատասխան բոլոր ընթացակարգերը սահմանում են, որ հայցողներին անհրաժեշտ է տեղավորել իրենց ընտանիքի անդամների հետ միասին: Դա նաև վերաբերում է բոլոր տրամադրվող ֆինանսական նպաստներին: Ավելին, ըստ ԺՏԿ-ում ապաստան հայցողների տեղավորման կարգի՝ ապաստան հայցողներին կացարանում տեղավորելիս հաշվի են առնում սեռը, ընտանիքի անդամների թիվը, տարիքը և այլ պայմաններ: Ըստ ԺՏԿ-ում ապաստան հայցողների տեղավորման կարգի 11 կետի՝ «տարբեր ընտանիքներին պատկանող տարբեր սեռի ապաստան հայցողները չեն կարող տեղավորվել նույն սենյակում»: Սակայն, անհրաժեշտ է ներկայացնել ավելի լայն պայման, համաձայն որի թույլ կտրվի նույն սենյակում տեղավորել նույն սեռի անձանց: Անհրաժեշտ է նաև միացնել մի շարք գործող ընթացակարգեր, քանի որ ԺՏԿ-ում տեղավորման մասին ընթացակարգի 4.12 կետով ավելանում է երկու լրացուցիչ պայման՝ կրոնը և այլ հանգամանքները. այս տարրերը բացակայում են ընթացակարգում:

Տեղավորման նոր կենտրոնը մշակելիս՝ պետք է հաշվի առնել գործող օրենքը և ապաստան հայցողներին բնակարանով ապահովելու վերաբերյալ համապատասխան ընթացակարգերը: Բացի վերոնշյալ սահմանափակումներից, Հավելված 2-ում ներկայացված է ապաստան հայցողներին բնակարանով ապահովման համար ներկայիս պայմանների մանրամասն ցանկը, որը ՀՀ իշխանությունները կարող են իրականացնել կամ փոփոխել մոտ ապագայում:

Առկա են նաև մի շարք ուղղություններ, որոնք պահանջում են հետագա զարգացում և կատարելագործում: Նախևառաջ, չի մշակվել ԺՏԿ շահագործման բուջեն և հաշվարկված չեն ընթացիկ ծախսերը: Դա կարող է սահմանափակել ԺՏԿ-ում տեղավորված ապաստան հայցողներին բնակարանով և պատշաճ խնամքով ապահովելու հնարավորությունները: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ ապագա ԺՏԿ տարածքը երկու անգամ գերազանցելու է գործող կենտրոնինը, ուստի դրա ընթացիկ շահագործման ծախսերը հոգալու համար կպահանջվեն լրացուցիչ ֆինանսական միջոցներ: Բացի այդ, ապաստան հայցողների համար սնունդ գնելու նպատակով հատկացվող գումարի չափը ֆիքսված է և ոչ բավարար:



Այս նպատակով կատարվող ընդհանուր ամսական ծախսը չի կարող գերազանցել 35.000 դրամը, և այն չի փոփոխվում պայմանավորված սննդի կարիքն ունեցող անձանց թվի աճով: Բյուջեում հաշվի առնված չեն նաև ապաստան հայցողների տարիքային, սեռական կամ սննդակարգային առանձնահատկությունների հետ կապված կարիքները: Գործնականում բոլորն ստանում են միևնույն սննդամթերքը:

ԺՏԿ ներկայիս անձնակազմում բացակայում են սոցիալական ծառայությունների և հոգեբանության մասնագետներ: Այդպիսի ծառայությունները մատուցվում են բացառապես արտաքին կառույցների, մասնավորապես՝ ՀԿ-ների կողմից: Բացի այդ, գործող կենտրոնում իրականացվող միջոցառումների գերակշռող մասը ֆինանսավորվում է ՄԱԿ ՓԳՀ կողմից, ինչը հարցականի տակ է դնում այդ աշխատանքների շարունակականությունը ՓԳՀ կողմից ֆինանսավորման դադարեցման դեպքում:

Վերջիվերջո, ապագա ժՏԿ բնակիչները պետք է պատշաճ տեղեկացված լինեն կենտրոնում իրենց բնակությանը և վարքագծին ներկայացվող պահանջների մասին: Ուստի, կենտրոնի բնակիչների վարքագծի կանոններում պետք է պատշաճ կերպով հաշվի առնվեն հասարակական կյանքի, այլոց իրավունքների նկատմամբ հարգանքի և խաղաղ համակեցության հիմնարար սկզբունքները:

Մաս 3 - Ապաստան հայցողների համար տեղավորման կոլեկտիվ կենտրոն. լավագույն գործելակերպ

Բնակարանի մատչելիությունը միջազգային պաշտպանություն հայցող անձանց ընդունման համակարգի հիմնական տարրն է: Ինչպես արդեն նշվել է, ապաստան հայցողներին անհրաժեշտ է տրամադրել ֆինանսական աջակցություն՝ բնակարանի վարձակալության և կենցաղային ծառայությունների ծախսերի հատուցման դիմաց կամ բնակարան: Համաձայն Ընդունման պայմանների մասին հրահանգի հոդված 2(i)-ի մասով հոդված 18(1)(բ)-ի՝ ԵՄ անդամ պետությունները կարող են առաջարկել «ապաստան հայցողների կոլեկտիվ կացարան»: Գործնականում, դա նշանակում է որ ապաստան հայցողները տեղավորվում են հյուրանոցային տիպի կամ բազմաբնակարան շենքերում՝ հանգրվանելով դրանցում այնքան ժամանակ, մինչև նրանց ապաստանի հայցի վերաբերյալ կայացվի վերջնական որոշում: Գործում են նաև ապաստան հայցողների հատուկ խմբերի համար նախատեսված հատուկ կառույցներ, մասնավորապես, ապաստան հայցողների խոցելի այնպիսի խմբերի համար, ինչպիսիք են առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված անչափահասները, միայնակ կանայք կամ մարդկանց թրաֆիքինգի փրկված անձինք :



Տեղավորման կենտրոնների հիմնական մասը ծառայում է երկու նպատակի: Նախ՝ դրանք բազմաբնակարանային շենքեր են, այսինքն՝ բնակելի շենքեր, որտեղ նաև կարելի է կազմակերպել սննդի և հագուստի տրամադրում, բժշկական օգնություն և սպասարկում, կրթություն և ժամանց: Հետևաբար, տեղավորման կենտրոնը պետք է իրենից ներկայացնի բնակելի տարածք, որը նախատեսված է բավարարելու բնակիչների ընդունման գրեթե բոլոր կարիքները:

Ըստ Եվրոպական պետություններում ապաստան հայցողների համար նախատեսված տեղավորման կառույցների կազմակերպման վերլուծության արդյունքների՝ ակնհայտ է, որ ընդունված չափանիշները և մոտեցումները տարբեր են: Մեկ բնակիչի համար սենյակում/ննջարանում նախատեսված տարածքը տատանվում է 4ք.մ-ից մինչև 15ք.մ: Օրինակ, Բելգիայում մեկ բնակչին տրամադրվող տարածքը բոլոր սենյակներում կազմում է 4ք.մ, Լիտվայում՝ 5ք.մ, իսկ Նիդերլանդներում այն պետք է լինի առնվազն 5ք.մ: Վերջապես, Լեհաստանում և Սլովակիայի Հանրապետությունում մեկ անձին հատկացվում է 6ք.մ՝ մեկ կամ երկու տեղանոց սենյակում: Գործում են նաև այլ պահանջներ, օրինակ՝ Իտալիայում յուրաքանչյուր սենյակում պետք է ապրի առավելագույնը 4 անձ: Հայաստանի ներկայիս տեղավորման կենտրոնը տրամադրում է երկտեղանոց սենյակներ՝ յուրաքանչյուրը 18 ք.մ: Հետևաբար, ապագա կենտրոնը պետք է համապատասխանի Հայաստանում գործող ներկայիս չափանիշներին: Այլապես, յուրաքանչյուր անձի համար պետք է ապահովվի 4ք.մ բնակելի տարածք:

Պետք է հաշվի առնել, որ ապաստան հայցողների ընտանիքների կազմը տարբեր է: Կան չամուսնացած անձինք, զույգեր, ամբողջական ընտանիք, կան նաև մի քանի սերունդներից կազմված ընտանիքներ, մասնավորապես՝ տատն ու պապը, ծնողները և երեխաները: Տեղավորման կենտրոնի ստեղծման ընթացքում պետք է հաշվի առնել այս գործոնները: Այդ իսկ պատճառով, անհրաժեշտ է կառուցել տարբեր չափի սենյակներ/ննջարաններ: Տեղավորման կենտրոնը պետք է այնպես կառուցվի, որ այնտեղ ապրեն և՛ չամուսնացած անձինք և՛ բազմանդամ ընտանիքներ: Հետևաբար, պետք է կառուցել երկտեղանոց և երեքտեղանոց սենյակներ/ննջարաններ, որտեղ կբնակվեն չամուսնացած անձինք, երեխայի հետ միայնակ ծնողներ կամ լիարժեք ընտանիքներ: Բազմանդամ ընտանիքները կարող են զբաղեցնել երկու/երեք սենյակ: Կա նաև կցված ննջարաններ կառուցելու հնարավորություն: Նման տարբերակը անհրաժեշտ է որոշ մշակութային նորմեր պահպանելու համար(օրինակ՝ որոշ խմբերում ընդունված չէ, որ հայրը կամ եղբայրները մոր, քրոջ կամ դստեր հետ ապրում են նույն սենյակում): Եվ վերջապես, անհարժեշտ է ապահովել տարբեր տիպի սենյակների առկայությունը, այդ թվում՝ կից սենյակով ննջարաններ, ինչը





հնարավորինս կերաշխավորի ընտանիքի միասնության սկզբունքի պահպանումն առ այն, որ նույն ընտանիքի անդամները բնակվում են միասին:

Ցանկացած սենյակ/ննջարան պետք է կահավորված լինի մահճակալներով, աթոռներով, սեղանով (իդեալական տարբերակ՝ ճաշասեղանով), զգեստապահարանով, պահարանով և դարակներով: Ի լրումն, այն կարող է պարունակել սառնարան, որտեղ բնակիչները կարող են մնունդ պահել: Փոքր և առաջին քայլերն անող երեխաներին անհրաժեշտ է տրամադրել փոքր մահճակալ և երեխայի աթոռ: Որոշ սենյակներում, արտակարգ իրավիճակների և մեծ թվով ապաստան հայցողների ներհուսքի դեպքում, անհրաժեշտ է տեղադրել երկհարկանի մահճակալներ:

Անհարժեշտ է հաշվի առնել կոլեկտիվ շենքերի համար հատուկ սանիտարական, առողջապահական և բնակարանային պայմանները: Օրինակ՝ կոլեկտիվ ապրելակերպը բարձրացնում է ոջիլների, լվերի, խավարասերների և այլ մակաբույծների առկայության վտանգը: Հետևաբար, նախ և առաջ կանխարգելիչ միջոցառումներից ելնելով՝ մաքրության ու միջատասպան միջոցների կիրառումն ավելի ոյուրին կլինի, եթե տեղավորման կենտրոնի ամբողջ կահույքը պատրաստված լինի մետաղից, երկաթյա կամ այլ ոչ փայտյա նյութից:

Առողջապահական և անվտանգության նկատառումներից ելնելով՝ պետք է խուսափել գորգերից և բռնկվելու բարձր վտանգ ունեցող հատակի տեքստիլ այլ ծածկերից: Հատակը պետք է ծածկված լինի լինոլեումով կամ այլ հրակայուն ծածկով, որը նաև ոյուրին է մաքուր պահել: Յուրաքանչյուր սենյակ/ննջարան պետք է պատշաճ կերպով լուսավորված լինի, ունենա օդափոխիչ և ջեռուցման համակարգեր: Սենյակում/ննջարանում պետք է տեղադրված լինի հակահրդեհային ահազանգման համակարգ: Եվ վերջապես, պատուհանները պետք է ունենան ճաղավանդակներ և սենյակն օդափոխելու համար անարգելք բացվեն :

ԵՄ անդամ պետություններում մեկ տեղավորման կենտրոնում հատկացվող տեղերի/մահճակալների թիվը տարբեր է: Օրինակ՝ Լեհաստանում ցանկացած կառույց պետք է ունենա առնվազն 120 տեղ/մահճակալ , Սլովակիայի Հանրապետությունում տեղերի/անկողինների առավելագույն քանակը 140 է , իսկ Լիտվայում՝ 92: Լատվիայում գործում է միայն մեկ՝ 100 տեղ/անկողին պարունակող տեղավորման կենտրոն: Այս ամենը հաշվի առնելով՝ տեղավորման կենտրոնը, ոչ արտակարգ իրավիճակի պարագայում, պետք



Է ունենա 100/120 բնակիչ տեղավորելու հնարավորություն: Միաժամանակ, տեղահանված անձանց զանգվածային ներհոսքի դեպքերում տեղավորման կենտրոնները պետք է բավարար չափով ճկուն լինեն՝ լրացուցիչ թվով անձանց ընդունելու համար:

Ցանկացած տեղավորման կենտրոն պետք է պատրաստ լինի արձագանքելու ապաստան հայցողների ընդունման համակարգի ցանկացած ճնշմանը: Ճնշումները հաղթահարելու նպատակով ԵՄ բոլոր անդամ պետությունները մշակում և անհրաժեշտության դեպքում իրականացնում են մեխանիզմներ՝ ուղղված ընդունման իրենց համակարգերում, ըստ արտակարգ ծրագրերի կամ/և ապաստան հայցողների, բանակարանով ապահովելու ծախսերի ծածկման ճկունությանը: Բյուջեի առկայության պարագայում, զանգվածային ներհոսքի դեպքում, թույլ է տրվում ավելացնել ընդունման ծախսերը և ձեռնարկել արագ գործողություններ:

Մշակված արտակարգ ծրագրերը ավելացող թվով ժամանող ապաստան հայցողներին նախատեսում են տեղավորել ընտրված կառույցներում, դպրոցներում կամ հյուրանոցներում : ԵՄ որոշ անդամ պետություններ լրացուցիչ ապաստան հայցողներին ծրագրում են նաև տեղավորել փակ (չգործող) կառույցներում: Չնայած այդ փաստին, գործող տեղավորման կենտրոնների մեծամասնությունում արդեն իսկ գործում է լրացուցիչ բնակիչներ ընդունելու բաժնեչափ: Օրինակ՝ Լատվիայում տեղավորման կենտրոնների ընդհանուր կարողությունը կարող է կրկնապատկվել, ինչի արդյունքում միջանցքներում և դասասենյակի նման ընդհանուր սենյակներում տեղադրվում են լրացուցիչ մահճակալներ: Նմանատիպ ընթացակարգեր գործում են նաև Սլովակիայի Հանրապետությունում, իսկ Իռլանդիայի և Լյուքսեմբուրգի տեղավորման կենտրոններում, համապատասխանաբար, գործում է 90% զբաղեցնելու գործոնը, իսկ որոշ մահճակալներ/տեղեր պահվում են ըստ անհրաժեշտության: Հայաստանում հարկավոր է մշակել նմանատիպ ընթացակարգեր: Ապագա տեղավորման կենտրոնը պետք է ճկուն և արագ կերպով պատրաստ լինի ընդունելու ավելացող թվով բնակիչների:

Բնակելի մասին կից ցանկացած տեղավորման կենտրոն պետք է երաշխավորի ընդունման այլ միջոցառումների մատչելիությունը, ինչպիսին որ սնունդն է: Եվրոպական երկրներում ապաստան հայցողներին տրամադրվում են պատրաստված սնունդ կամ ֆինանսական նպաստ և վաուչեր: Հանդիպում է նաև երկու հնարավոր տարբերակների համատեղումը: Հունգարիայում, Սլովակիայի Հանրապետությունում կամ Պորտուգալիայում օրական երեքից հինգ անգամ տրամադրվում է պատրաստված սնունդ, իսկ Բելգիայում և Կիպրոսում՝ սննդի վաուչերներ: Այլ երկրներ, օրինակ՝ Լիտվան, Նիդերլանդները և Չեխիայի



Հանրապետությունը առաջարկում են սննդի համար նախատեսված ֆինանսական նպաստ:

Պատրաստված սննդի տարբերակի դեպքում տեղավորման կենտրոնում անհրաժեշտ է ապահովել հատուկ պայմաններ: Անհրաժեշտ է ապահովել խոհանոցի, ճաշարանի կամ կենտրոնից դուրս պատրաստված սնունդը բաժանելու համար նախատեսված հատուկ սենյակի առկայությունը: Սնունդը պետք է տրամադրվի կենտրոնի բնակիչներին օրական երեք անգամ: Երեխաները պետք է ստանան սնունդ օրական հինգ անգամ: Ավելին՝ խոհանոցը կամ ճաշարանը գործարկելու և աշխատացնելու համար անհրաժեշտ է ապահովել բոլոր սանիտարահիգիենիկ պայմանները՝ հետևելով որոշ կանոնների: Տեղավորման կենտրոնից դուրս պատրաստված և կենտրոնի բնակիչներին տրամադրվող սննդի համակարգը պահանջում է հատուկ սենյակ: Առաջին դեպքում անհրաժեշտ է աշխատանքի ընդունել լրացուցիչ աշխատակազմ, իսկ խոհանոցը պետք է լինի պատշաճ կերպով սարքավորված: Պատրաստված և մատուցված սնունդը պետք է համապատասխանի որոշակի մշակութային և դիետիկ պահանջներին, որոնք պետք է որոշվեն նաև բնակիչների հետ համաձայնեցվելուց հետո: Գործնականում, ամեն օր պետք է պատրաստվեն (կամ մատուցվեն) մի քանի տարբեր ճաշատեսակներ:

Ֆինանսական նպաստների և վաուչերների համակարգն ավելի մատչելի է, սակայն այն սահմանափակված է մի շարք գործոններով: Նախ, տեղավորման կենտրոնի բնակիչների համար անհրաժեշտ է հատուկ վայր հատկացնել, որտեղ նրանք կկարողանան իրենց համար կերակուր պատրաստել: Դա կարող է լինել գազօջախով, պահարաններով(յուրաքանչյուր բնակիչ/ընտանիքին հատկացվում է փակվող մեկ պահարան) և սառնարաններով կահավորված ընդհանուր խոհանոց: Մեկ այլ տարբերակ՝ յուրաքանչյուր սենյակում հարմարեցնել փոքր խոհանոց: Այս դեպքում կպահանջվի պահպանել անվտանգության ու հակահրդեհային կանոնները: Բացի այդ, այս տարբերակը շինարարության ու տեխնիկական սպասարկման առումով ավելի թանկ կլինի: Մյուս կողմից, ընդհանուր խոհանոցը հատուկ մթնոլորտ է ստեղծում բնակիչների ինտեգրման համար: Ընդհանուր խոհանոցները պետք է առկա լինեն տեղավորման կենտրոնի ամեն հատվածում: Խոհանոցը պետք է կահավորված լինի անհրաժեշտ սարքավորումներով և կահույքով:

Ապաստան հայցողներին, որոնց տրամադրվում է սննդի համար նախատեսված ֆինանսական նպաստ(կամ վաուչերներ), ազատ են գնելու իրենց նախընտրանք ցանկացած սննդատեսակ: Նրանք կարող են գնել այն մթերքը, որը համապատասխանում է իրենց դիետիկ և մշակութային նորմերին, և վերջապես՝ կարող են անել այն ինչ ցանկանում են: Ի լրումն ասվածի՝ ի վիճակի լինելով գնել իրենց անհրաժեշտ սնունդը՝ ապաստան հայցողները զարգացնում են սեփական ինքնուրույնության և անկախության հիմնական կարողությունները: Սեփական կարիքները հոգալու նպատակով կերակուրը պատրաստող



բնակիչները չեն կարող դժգոհել ճաշարանում մատուցվող կերակուրի որակից: Եվ վերջապես, նրանք ստիպված կլինեն դուրս գալ տեղավորման կենտրոնից, ինչը իր հերթին կխթանի հարևանների հետ ինտեգրման գործընթացը:

Տեղավորման կենտրոնի բնակիչները պետք է կարողանան օգտվել սանիտարական ծառայություններից և միջոցներից: Կենտրոնում պետք է կառուցել ընդհանուր կամ առանձին լոգարաններ: Առաջին դեպքում, պետք է լինեն առանձին լոգարաններ տղամարդկանց և կանանց համար: Համաձայն Լեհաստանում գործող չափանիշների՝ յուրաքանչյուր 10 կնոջը և 20 տղամարդուն պետք է հատկացվի մեկ զուգարանակոնք, 20 տղամարդուն՝ մեկ պիսուար, 15 կանանց և տղամարդկանց՝ մեկ ցնցուղ և յուրաքանչյուր 5 անձանց հատկացվում է մեկ լվացարան: Ավելին, պետք է ապահովվի առանձնացվածությունը: Համաձայն ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի՝ լոգարանները այն վայրերն են, որտեղ կանանց և աղջիկների նկատմամբ հաճախ տեղի է ունենում բռնություն:

Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է իրականացնել բոլոր նախազգուշական միջոցները՝ խոցելի խմբերին ֆիզիկական և հոգեբանական վնասից պաշտպանելու համար: Բացի այդ, ընդհանուր լոգարանի օգտագործումը տարբեր մշակույթներ կրող անձանց կողմից կարող է առաջացնել կոնֆլիկտներ, այդ թվում՝ բռնություն: Ընդհանուր լոգարանների տարբերակը ընտրելու դեպքում նվազում են շինարարության և ջրատար գծերի կառուցման ծախսերը: Սակայն, երբ կառույցը բնակեցված է լոգարանները պետք է պատշաճ կերպով մաքրվեն և տեխնիկապես սպասարկվեն: Ընդհանուր տարածքների, այդ թվում՝ լոգարանների, մաքրման համար անհրաժեշտ է աշխատանքի ընդունել հավաքարարի, որը կանոնավոր կերպով կպահպանի մաքրությունը: Սենյակներում ներկառուցված լոգարանների համար հոգ են տանում բնակիչները: Այս տարբերակը երաշխավորում է առանձնացվածությունը և կանխում բռնությունն ու հնարավոր վնասը: Բնակիչների համար պետք է գործի լվացքի համար նախատեսված սենյակ, որտեղ պետք է տեղադրված լինեն լվացքի մեքենաներ և լվացքը չորացնելու հարմարանքներ:

Յուրաքանչյուր տեղավորման կենտրոն բազմաբնակելի շինություն է, որը ընդունում է ապաստան հայցողների: Այդ իսկ պատճառով, բացի բնակելի տարածքից, այնտեղ պետք է գործեն կրթության և ժամանց կազմակերպելու համար նախատեսված տարածքներ: ԵՄ անդամ պետություններում տեղավորման կենտրոնների բնակիչների համար կազմակերպվում են լեզվի, ինտեգրմանը նպաստող դասընթացներ և մասնագիտական



վերապատրաստում: Յետևաբար, տեղավորման կենտրոնը պետք է ունենա բազմաֆունկցիոնալ սենյակ: Յամաձայն Բելգիայում գործող չափանիշների՝ այդպիսի սենյակը պետք է ունենա բավարար չափով մեծություն՝ 50 անձ տեղավորելու համար: Դրա նվազագույն չափերը պետք է լինի 30ք.մ: Բազմակի նշանակություն ունեցող սենյակում տեղավորման կենտրոնի բնակիչները կկարողանան մասնակցել և ներգրավվել տեղավորման կենտրոնի կառավարման գործընթացում: Կազմակերպվում են «կենտրոնի բնակիչներին ներկայացնող խորհուրդներ, որոնցում ներգրավված են կանանց և տղամարդկանց հավասար թիվը, (...) (օրինակ) որոնք զբաղվում են հանրային իարգեկմամբ և կանխում են բռնության դեպքերը՝ այդ թվում սեռական և գենդերային բռնությունը և նվազեցնում լարվածությունը» :

Տեղավորման կենտրոնը պետք է ունենա մի շարք սենյակներ և հարմարություններ, որոնք օգտագործվելու են կրթական և ժամանցի նպատակներով (մանրամասն տեղեկությունների համար տես հավելված 1):

- Լեզվի դասընթացների և վերապատրաստում կազմակերպելու համար դասասենյակ:
- Խաղահրապարակներ(ինչպես օրինակ՝ Կիպրոսում, Յունգարիայում, Լեհաստանում):
- Ֆիթնես կենտրոն կամ մարզասրահ՝ անվճար տրվող մարզաքարտերով, սպորտային ներքնակներով, սեղանի թենիսի պարագաներով և այլ սպորտային սարքավորումներով(ինչպես օրինակ՝ Լատվիայում, Սլովակիայի Յանրապետությունում):
- Այգի (ինչպես օրինակ՝ Էստոնիայում, որտեղ այգու համար առանձնացվում է հողատարածք, իսկ տեղավորման կենտրոնի բնակիչները տնկում և մշակում են, ասենք՝ բանջարեղեն):
- Մանկապարտեզ կամ նախադպրոցական տարիքի երեխաների համար ինամքի կենտրոն (պարտադիր է Լեհաստանում և Պորտուգալիայում):
- Յամակարգչային սենյակ և հեռուստասենյակ, որտեղ կենտրոնի բնակիչները կարող են հանդիպել, զրուցել և շփվել իրենց ընտանիքի անդամների և ընկերների հետ:
- Յայերեն և օտար լեզուներով տարբեր գրքեր և թերթեր պարունակող գրադարան:
- Կրոնական միջոցառումներ համար նախատեսված հատուկ սենյակ(ինչպես օրինակ՝ Կիպրոսում, Լատվիայում, Լիտվայում և Լեհաստանում) :



- Այցելուների սենյակ՝ դյուրացնելու ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի, իրավաբանների, սոցիալական աշխատողների և կենտրոնի բնակիչների միջև հաղորդակցությունը: Սենյակում պետք է լինեն սեղան և աթոռներ, ինչպես նաև՝ գաղտնիությունը երաշխավորող պայմաններ:
- Սենյակ կամ առանձնացված տարածք, որը կծառայի որպես տեղեկատվության տարածման կետ, որտեղ բնակիչներին կտրամադրվեն տպագիր կամ տեսաձայնային նյութեր և այլ տեղեկատվություն:

Տեղավորման կենտրոնի ամբողջ տարածքում չի թույլատրվում ծխել. այս կանոնը վերաբերում է թե՛ կենտրոնի բնակիչներին, և թե՛ անձնակազմին: Անվտանգության նկատառումներից ելնելով՝ առաջարկվում է ցանկապատել շինությունը՝ խստորեն վերահսկելով մուտքը: Տեղավորման կենտրոն մուտքի իրավունք ունենալ և մուտք գործել կարող են միայն լիազորված անձինք: Միաժամանակ, անվտանգության միջոցառումները չպետք է որևէ ձևով սահմանափակեն բնակիչների տեղաշարժի ազատությունը:

Անհրաժեշտ է ապահովել տեղավորման կենտրոնի հետևյալ բաղադրիչները՝

- Բնակելի շինություն կամ շինություններ: Բնակելի տարածքը պետք է գտնվի առաջին շինությունում (շինություններում), որը տեղակայված է ցանկապատից հեռավորության վրա: Բնակելի շինությունը(ները) պետք է ունենա հիմնական մուտք և վթարային ելքեր: Առաջարկվում է կառուցել միայն մեկ հարկանի շինություններ՝ հաշմանդամություն ունեցող անձանց ելումուտը հեշտացնելու համար: Չամուսնացած կանանց, տղամարդկանց և ընտանիքների համար կարող են կառուցվել առանձին շինություններ: Մեկ այլ հնարավոր տարբերակը՝ բոլոր խմբերի բնակիչներին մեկ շինության տարբեր առանձնացված հատվածներում տեղավորելն է: Շինության յուրաքանչյուր հատված այնտեղ չբնակվող անձանց համար պետք է ունենա մուտքի և ելքի սահմանափակումներ: Տվյալ դեպքում, պետք է տեղադրվեն կողպեքով և անվտանգության քարտերով փակվող մուտքի դռներ: Յուրաքանչյուր հատված կամ շինություն պետք է ունենա առանձին խոհանոց: Ամենագերադասելի տարբերակը ենթադրում է, որ յուրաքանչյուր սենյակ պետք է ունենա ներկառուցված լոգասենյակ: Որպես բնակիչների փոփոխվող թվերի և խմբերի(օրինակ՝ երբ չամուսնացած կանանց թիվը գերազանցի չամուսնացած տղամարդկանց թվին) համապատասխան արձագանք՝ երկու հատվածները կարելի է բաժանել հատուկ շարժական, միջանցքը հատող, տարաթիվ բաժանող դռան միջոցով: Նման բաժանող համակարգի միջոցով կարելի է փոխել շինության երկու հատվածներից յուրաքանչյուրի հնարավորությունը՝ ավելի հարմարավետ դարձնելով այն (Տե՛ս Հավելված 1, «Տեղավորման



համալիր՝ շինություններ/մասեր» տղամարդկանց և կանանց համար հարմարացված հատվածների առաջարկվող կառուցվածք):

- Տեղավորման համալիրում բոլոր անձանց ելումուտն իրականացվում է հիմնական շինություն միջոցով: Հիմնական շինությունում պետք է լինեն պահակակետ/անվտանգության աշխատակցի սենյակ (սենյակներ), բժշկական ընդունարան, անձնակազմի և այցելուների համար նախատեսված սենյակներ: Ընդհանուր օգտագործման բոլոր սենյակներն, ինչպիսիք են՝ գրադարանը կամ դասասենյակը պետք է գտնվեն այս շինությունում: Ծիսությունը պետք է ունենա նախասրահ, որի պատին փակցվում է բնակիչների համար տեղեկատվություն: Հիմնական շինությունում կլինեն նաև տղամարդկանց և կանանց համար առանձնացված ընդհանուր լոգասենյակ:

- Ընդհանուր օգտագործման հատվածը՝ շինության մաս է կամ առանձին շինություն, որտեղ գտնվում են բազմակի նշանակության սենյակը, գրադարանը, հոգեբանի ընդունարանը և այլ սենյակներ: Բոլոր բնակիչները կարող են օգտվել այդ սենյակներից: Կախված համալիրի կառուցվածքից, տեղավորման կենտրոնի այս հատվածը պետք է գտնվի կամ հիմնական շինությունում, կամ առանձին շինությունում կամ էլ բնակելի շինության ընդհանուր օգտագործման տարածքի հատուկ հատվածում:

- Անձնակազմի սենյակ(ներ) (և անձնակազմի մաս/հատված): Տեղավորման կենտրոնում աշխատող անձնակազմին պետք է հատկացվի առնվազն երկու առանձին սենյակ: Առաջին սենյակում պետք է տեղակայվի հերթապահ աշխատակիցը, ում բնակիչները կարող են դիմել օգնության համար: Այլ պարագայում, նախասրահում կարող է լինել ընդունարան, որը կօգտագործվի առանձին սենյակի փոխարեն(այս տարբերակը չի երաշխավորում առանձնացված լինելը): Բնակիչները չեն կարող օգտվել անձնակազմի այլ սենյակներից. դրանք պետք է առանձնացվեն բացառապես կենտրոնում աշխատող անձնակազմի համար: Եթե անձնակազմի համար հատկացվում են մի քանի սենյակներ, անվտանգության նկատառումներից ելնելով՝ դրանք պետք է ներսից փակվելու/կողպվելու հնարավորություն ունենան: Անձնակազմի սենյակի(ների) պատուհանները պետք է ունենան ճաղավանդակներ:

- Պահեստն անհրաժեշտ է՝ լրացուցիչ կահույք և սարքավորումներ պահեստավորելու համար: Պահեստը պետք է հասանելի լինի միայն տեղավորման կենտրոնում աշխատող անձնակազմին:

Տեղավորման կենտրոնը պետք է պատրաստ լինի ընդունել հատուկ աջակցության կարիք ունեցող անձանց և բավարարել նրանց կարիքները:

- Կենտրոնը պետք է ունենա հոգեբանի և բժշկի սենյակ-ընդունարան՝ հոգեբանական և առողջական խնդիրներ ունեցող անձանց օգնություն ցուցաբերելու համար:



- Կենտրոնը պետք է պատրաստ լինի ընդունել տարբեր կարողություններ ունեցող անձանց: Ամբողջ կենտրոնը պետք է կառուցվի այնպես, որ հասանելի լինի հաշմանդամի սայլակով կամ տեղաշարժվելու սահմանափակ ունակություն ունեցող անձանց համար: Տեսողությունից զուրկ անձանց համար պետք է առկա լինեն Բրեյլի գրերով տեղեկատվական ցուցանակներ: Բոլոր ընդհանուր օգտագործման սենյակները(օրինակ՝ խոհանոցները, լոգասենյակները կամ լվացքի համար նախատեսված սենյակները) և բոլոր սենյակ/ննջարանները պետք է հարմարեցված լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Սակայն, եթե, ֆինանսական սահմանափակումներից ելնելով, դա հնարավոր չէ, յուրաքանչյուր հատվածում առկազև երկու կամ երեք սենյակ պետք է հարմարեցված լինի հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Ինչպես արդեն նշվել է, ԵՄ անդամ պետությունների մեծ մասում առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված անչափահաս ապաստան հայցողները բնակվում են առանձին և հատուկ ընդունման կենտրոններում, կամ երեխաներին պատշաճ խնամք և նպատակային աջակցություն տրամադրող այլ հաստատություններում: ԵՄ որոշ անդամ պետություններում առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված անչափահաս ապաստան հայցողները բնակեցվում են ընդունման կենտրոններում, բայց միայն առանձին և պաշտպանված մասում: Հաշվի առնելով այն փաստը, որ Հայաստանը հազվադեպ է ընդունում առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված անչափահաս ապաստան հայցողներին (փաստացի, մինչ այսօր, գրանցվել է ընդհամենը մեկ դեպք), խորհուրդ չի տրվում տեղավորման ապագա կենտրոնը հարմարեցնել առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված անչափահաս ապաստան հայցողների բնակեցման նպատակներին:

Անհրաժեշտ է նաև հաշվի առնել անվտանգությանն առնչվող հարցեր: Դա նշանակում է, որ ընդհանուր օգտագործման տարածքներում անհրաժեշտ է տեղադրել տեսավերահսկման համակարգ: Կենտրոն մուտք գործող բոլոր անձանց անձը պետք է ստուգել: Բնակիչներին անհրաժեշտ է տրամադրել անվտանգության հատուկ քարտեր, որոնց միջոցով նրանք կկարողանան մուտք գործել տեղավորման կենտրոնի հատուկ հատվածներ:

Տեղավորման ապագա կենտրոնը պետք է լինի Էկոլոգիապես մաքուր և ռեսուրսների օգտագործման առումով արդյունավետ: Հաշվի առնելով բյուջեի սահմանափակումները և Հայաստանի բարդ իրավիճակը՝ խիստ կարևոր է Էլեկտրաէներգիայի և ջրի խնայողության հարցը: Այդ պատճառով անհրաժեշտ է բարելավել ջեռուցման, հովացման, օդափոխման կամ արևային էներգիայի պասիվ օգտագործման համակարգերը, ինչպես նաև լուսավորման և Էլեկտրական հարմարությունները: Շինությունների տեխնիկական սպասարկման ծախսերի նվազեցման և օպտիմալացման միջոցառումների մեջ են մտնում





Նաև անձրևային ջրի օգտագործումը, ջրի ինսայողությունը, արևային պանելները, պասիվ բնական լուսավորման և պասիվ հովացման շինարարական մոտեցումները: Բացի այդ անհրաժեշտ է հաշվի առնել, որ Հայաստանը գտնվում է սեյսմիկ ակտիվության գոտում, ինչև ենթադրում է սեյսմակայուն շինարարության համապատասխան նորմերի խիստ պահպանում:

ԵՄ անդամ-պետությունները ստանձնել են միջազգային պաշտպանության համար դիմաձև անձանց բնակարանավորման կարիքները հոգալու ֆինանսական պարտավորությունը: Այս նպատակով հատկացվող բյուջետային միջոցները տնօրինվում են պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման համապատասխան մարմինների կողմից: Միջազգային պաշտպանության համար դիմաձև անձանց բնակարանավորման նպատակով պետությունները կարող են տիրապետել կամ տնօրինել շինություններ, բնակարաններ կամ այլ տարածքներ, վարձակալել դրանք, ինչպես նաև պատվիրակել այդ գործառույթները արտաքին կառույցներին կամ կիրառել զուգակցված մոտեցում: Օրինակ, Ֆինլանդիայում պետական բյուջեից հատկացվող միջոցների հաշվին Ֆիննական Կարմիր Խաչի տնօրինության ներքո գործում է ընդունման կենտրոն, սակայն կենտրոնի գործունեության համար գլխավոր պատասխանատուն շարունակում է հանդիսանալ պետությունը: Լեհաստանում գործող տեղավորման կենտրոնների աշխատանքի համար ֆինանսավորման և համակարգման առումով պատասխանատու է Օտարերկրացիների հարցերով գրասենյակը, սակայն կենտրոնների կառավարումը կարող է պայմանագրային հիմունքներով և բաց մրցույթի արդյունքների հիման վրա հանձնարարվել արտաքին կառույցների: Նման մոտեցում կիրառվում է նաև Նորվեգիայում: Լատվիայում գործում է միայն մեկ տեղավորման կենտրոն, որն ամբողջությամբ ֆինանսավորվում և կառավարվում է պետության կողմից: Ընդհանրապես, ընդունման համակարգի կառուցվածքը ԵՄ տարբեր անդամ-պետություններում տարբեր է: Որոշ երկրներում գործում է կենտրոնացված համակարգ, որտեղ ֆինանսական և ադմինիստրատիվ կառավարումն իրականացվում է համապատասխան պետական մարմինների կողմից, մինչդեռ այլ երկրներում այդ գործառույթներն իրականացվում են տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ: Պետությունները նաև ընդունման կենտրոնների կառավարմանը ներգրավում են երրորդ կողմերի (ՀԿ-ների, մասնավոր կազմակերպությունների):



#### **Մաս 4 - Ապաստան հայցողների համար նախատեսված կոլեկտիվ տեղավորման կենտրոն. առաջարկություններ**

Ապաստան հայցողների ՀՀ ընդունման համակարգը առայժմ զարգացման փուլում է: Նոր տեղավորման կենտրոնը հիմնելիս անհրաժեշտ է հաշվի առնել լավագույն գործելակերպի մի շարք օրինակներ: Ներկայիս ԺՏԿ-ն ունի երկու սենյակ հաշմանդամություն ունեցող անձանց համար, ընդհանուր օգտագործման լոգասենյակներ, լվացքասենյակ և ընդհանուր օգտագործման խոհանոց: Կա նաև դասասենյակ, երեխաների համար նախատեսված սենյակ, այցելուների սենյակ և հեռուստացույց դիտելու ու համակարգչից օգտվելու համար նախատեսված ընդհանուր օգտագործման սենյակ: Այս հարմարությունները պետք է առկա լինեն տեղավորման նոր կենտրոնում:

Հայաստանում փախստականի կարգավիճակ ստանալու համար դիմող անձանց վերաբերյալ վիճակագրական տվյալների վերլուծության արդյունքներով՝ նոր շինության տեղավորման կարողությունը պետք է կազմի 120 տեղ/մահճակալ ոչ-արտակարգ՝ սովորական իրավիճակում: Ապաստան հայցողների մեծամասնությունը ժամանում են Հայաստան ընտանիքներով: Դա նշանակում է որ տեղավորման կենտրոնը և ընդունման համակարգը պետք է պատրաստ լինի արձագանքել նրանց կարիներին: Սակայն, կա նաև հատուկ աջակցություն պահանջող ծեր անձանց խումբ:

Տեղահանված անձանց համար ընդունման պատշաճ պայմանների տրամադրումը խիստ կարևոր է իրենց բարեկեցության և ապաստանի ընթացակարգի արդյունքի համար: Այդ իսկ պատճառով առաջարկվում են ապաստան հայցողների տեղավորման հետևյալ պայմանները.

- խտրականության արգելքի, մարդու արժանապատության և անձեռնմխելիության սկզբունքի պահպանում,
- մարդու իրավունքների միջազգային օրենսդրության ու չափանիշների ապահովում՝ ապաստան հայցողների համար երաշխավորելու արժանապատիվ միջավայր,
- ապաստան հայցողների ինքնուրույնության խրախուսում և սեփական կյանքի համար պատասխանատվություն զգացման արմատավորում,



- ընդունման համակարգի տարբեր բաղադրիչների հասանելիության դյուրացում, ինչպիսիք են՝ կրթությունը, առողջապահությունը և սնունդը, ինչպես նաև՝ ժամանցի ու հանգստի միջոցառումները,
- խոցելի խմբերին պատկանող ապաստան հայցողների հատուկ կարիքների գիտակցում,
- ընտանեկան միասնության և առնձնացվածության սկզբունքի երաշխավորում,
- անհրաժեշտ անվտանգության, սոցիալական ու տնտեսական աջակցության երաշխավորում՝ ապահովելով այս միջոցառումները մինչև նրանց ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը,
- բնակիչների ֆիզիկական անվտանգության և բարեկեցության երաշխավորում,
- տեղավորման միջոցառումները պետք է կազմակերպվեն ապաստանի համար հայցը ներկայացնելուց անմիջապես հետո,
- որևէ կերպ չպետք է սահմանափակվի բնակիչների տեղաշարժի ազատությունը:

խոցելի խմբերի ներկայացուցիչների (հատկապես՝ հաշմանդամների) համար պետք է երաշխավորված լինի կարգավիճակի որոշման նպատակով անցկացվող հարցազրույցին մասնակցելու հնարավորությունը: Ներկայումս հարցազրույցներն անցկացվում են երևանում՝ ՄՊԾ տարածքում: Ուստի, հաշվի առնելով ԺՏԿ տեղակայման նոր վայրը և դրանով պայմանավորված՝ խոցելի խմբի որոշ ներկայացուցիչների համար երևան փոխադրվելու հետ կապված բարդությունները, ՄՊԾ կողմից պետք է դիտարկվի նման անձանց հետ հենց կենտրոնի տարածքում հարցազրույց անցկացնելու հնարավորությունը նախատեսող հատուկ ընթացակարգի մշակման անհրաժեշտությունը: Դրա հետ միասին պետք է ապահովվի նաև համապատասխան տարածքի առկայությունը:

Տեղավորման նոր համալիրը նախագծելիս անհրաժեշտ է հաշվի առնել ստորև նշված բաղադրիչները.

- Պետք է կառուցել միայն մեկ հարկանի շինություններ՝ ելնելով հաշմանդամություն ունեցող անձանց հասանելի լինելու նկատառումներից,
- Չամուխսացած կանանց, տղամարդկանց և ընտանիքների համար կարող են լինել առանձին շինություններ կամ առանձին հատվածների բաժանված մեկ շինություն՝



բնակիչների բոլոր խմբերի բնակեցման համար: Կանայք պետք է բնակեցվեն առանձին հատվածներում և մասերում, որոնք կունենան սահմանափակ մուտք ոչ լիազորված անձանց, այդ թվում՝ կենտրոնի այլ բնակիչների համար:

- Տեղավորման համալիրը պետք է ունենա համապատասխան տարածք բնակիչների համար ուսումնական դասընթացներ, բժշկական օգնություն և ժամանցի միջոցառումներ կազմակերպելու, ինչպես նաև երեխաների հոգեբանական և սոցիալական կարիքները հոգալու համար:

Հաշվի առնելով գործող օրենքը և համապատասխան ընթացակարգերը՝ ՀՀ իշխանությունները կարող են (Հավելված 2-ում ներկայացված է առաջարկությունների հնարավոր ցանկը)

- այն ապաստան հայցողների համար, որոնք անվտանգության, առողջության կամ որևէ այլ լուրջ պատճառներով չեն կարող ապրել տեղավորման կենտրոնում՝ մշակել հստակ դրույթներ այլընտրանքային բնակեցման վերաբերյալ,
- տեղավորման հատուկ միջոցառումներ նախաձեռնել առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված անչափահաս ապաստան հայցողների համար: Դա նշանակում է՝ առանձին կենտրոնի կառուցում, այլ ընտանիքին երեխային դաստիարակության հանձնելու հնարավորություն կամ հատուկ պաշտպանություն ապահովող և այդ խմբի ընդունման կարիքները բավարարող հաստատության ստեղծում: 16-17 տարին լրացած նման երեխաները չպետք է օրենսդրության և գործող կարգավորումների տեսանկյունից դիտարկվեն որպես չափահասներ և նրանց համար անհրաժեշտ է ապահովել տեղավորման հատուկ պայմաններ,
- շարունակ զարգացնել և կատարելագործել Հայաստանում ապաստան հայցողներին սննդով ապահովելու համար նախատեսված դրամական օգնության կամ/և հատուկ կտրոնների հատկացման մեխանիզմները,
- ապաստան հայցողների բնակեցման հետ կապված պատշաճ ընթացակարգերի մշակում,
- ԺՏԿ ժամանելուն պես ապաստան հայցողներին պարտադիր բրշկական հետազոտության ենթարկում՝ հաշվի առնելով, սակայն, որ հետազոտությունից հրաժարվելու փաստը չպետք է որևէ ազդեցություն գործի կարգավիճակի որոշման գործընթացի վրա: (Առաջարկվում է, որ ԺՏԿ նոր բնակիչների և ապաստան հայցողների համար պարտադիր բժշկական զննման ներդնումը պետք է հիմնված լինի այս ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրության վրա)



Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի միջազգային ֆեդերացիայի կողմից մշակված ապաստան հայցողների բնակեցման սկզբունքները ներկայացված են Հավելված 5-ում և պետք է ուղենիշ ծառայեն ՀՀ-ում ընդունման համակարգի հետագա փոփոխությունների վերաբերյալ ակնկալվող աշխատանքներում:

Ապագա ԺՏԿ-ն պետք է ապահովված լինի բնակիչներին մի շարք համապատասխան ծառայություններ մատուցելու համար անհրաժեշտ տարածքներով: Այդ ծառայությունները պետք է մատուցվեն կենտրոնի անձնակազմի, օրինակ՝ տնօրենի, սոցիալական աշխատողների, անվտանգության աշխատակիցների, ինչպես նաև օժանդակ անձնակազմի՝ ուսուցիչների, հոգեբանների և բուժաշխատողների կողմից: Անհրաժեշտ է նաև ապահովել միջազգային կազմակերպությունների, ՀԿ-ների և ապաստան հայցողներին աջակցություն ցույց տվող այլ կառույցների մուտքը կենտրոնի համապատասխան տարածքներ, որտեղ թվարկվածները կարող են կազմակերպել իրենց գործունեությունը:

- Ծառայություններ մատուցող բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչները պետք է տիրապետեն բնակիչներին հասկանալի լեզվին: Անհրաժեշտության դեպքում ապահովվում է թարգմանություն (դա հատկապես վերաբերում է կողմնորոշման դասընթացներին):
- ՄՊԾ կողմից կենտրոնում սոցիալական աշխատող ներգրավելու պրակտիկան պետք է շարունակվի: Այս նպատակով անհրաժեշտ է ապահովել ՄՊԾ բյուջեում համապատասխան միջոցների առկայությունը:
- Հնարավորության դեպքում որոշ ծառայությունների մատուցումը պետք է ՄՊԾ կողմից պետք է հանձնարարվի գործընկեր կազմակերպությունների:
- ՄԱԿՓԳՀ-ն, ՀԿ-ները և գործընկեր կազմակերպությունները պետք է մշտապես ունենան ԺՏԿ-ում համապատասխան ծառայություններ մատուցելու հնարավորություն:

ԺՏԿ բնակիչների համար առաջարկվող ծառայությունների ցանկը ներկայացված է 3-րդ հավելվածում:

Առաջարկվում է նաև փոփոխություններ և լրացումներ կատարել «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում՝ միջազգային չափանիշներին վերջինիս դրույթների համապատասխանությունն ամբողջությամբ ապահովելու, ինչպես նաև մայր օրենքին դրա



կիրառումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի համապատասխանությունն ապահովելու նկատառումով: Դա, մասնավորապես, վերաբերում է.

- Օրենքի 14-րդ հոդվածով պետք է նախատեսվի բնակարանավորման և նյութական օգնության հասանելիությունը բոլոր ապաստան հայցողների համար: Պետք է սահմանվեն խոցելի խմբերին պատկանող ապաստան հայցողների նկատմամբ կիրառվող հատուկ կանոններ և բնակարանավորման համապատասխան պայմաններ: Պետք է նախատեսվեն բնակարանավորման այլընտրանքային տարբերակներ այն ապաստան հայցողների համար, ովքեր անվտանգության, առողջական վիճակի կամ անձնական այլ նկատառումներից ելնելով չեն կարող բնակեցվել ԺՏԿ-ում: Բացի այդ, անհրաժեշտ է տալ «բնակարանի կարիք ունեցող» հասկացության սահմանումը:
- Առանց ուղեկցման երեխաների համար պետք է նախատեսվի բնակարանավորման այլընտրանքային տարբերակ, և նրանք չպետք է տեղավորվեն ԺՏԿ-ում: Այս մոտեցումն օրենսդրորեն ամրագրելու նպատակով անհրաժեշտ է համապատասխան փոփոպություն կատարել «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի մասնավորապես 24-րդ հոդվածում:
- Գործող օրենքով և քաղաքականություններով ՄՊԾ համար պետք է նախատեսվեն ճկուն բյուջետային մեխանիզմներ՝ ԺՏԿ ընթացիկ ծախսերը հոգալու, կենտրոնից դուրս բնակվող ապաստան հայցողներին աջակցություն ցույց տալու և վերջիններիս սննդամթերք և նյութական օգնություն տրամադրելու համար:
- ԺՏԿ-ում բնակվող ապաստան հայցողների կարգապահության կանոնները պետք է ներառեն պարտականությունների և ցուցումների ցանկ: Դրանք պետք է պարտադիր բնույթ կրեն կենտրոնի բոլոր բնակիչների համար:
- ԺՏԿ-ում տեղավորմանն առնչվող գործող ընթացակարգերը պետք է չհակասեն միմյանց և ենթակա լինեն հստակ մեկնաբանման:

Անհրաժեշտ է շարունակել գործող օրենսդրության համադրումը միջազգային չափանիշների հետ և իրականացնել բացերի և հակասությունների վերհանմանն ուղղված վերլուծություններ: Դրանց արդյունքների հիման վրա ապա կարող է կազմվել մայր օրենքում և դրա կիրառումն ապահովող ենթաօրենսդրական ակտերում կատարվելիք փոփոխությունների և լրացումների ցանկը:



Եվ ի վերջո, ՀՀ իշխանությունները պետք է պատրաստ լինեն տեղավորման կենտրոնի հավանական բնակիչների ավելացող թվին: Անհրաժեշտ է մշակել հատուկ արտակարգ իրավիճակների ծրագիր և ընթացակարգ, որպեսզի տեղավորման ապագա կենտրոնը առավել ճկուն և արագ կերպով պատրաստ լինի ընդունելու ավելացող թվով ապաստան հայցողների:

Հավելված 1. Ապաստան հայցողների համար նախատեսված տեղավորման կոլեկտիվ կենտրոնի մշակման հիմնական բաղադրիչները

Նոր շինությունը պետք է ունենա 120 տեղ/մահճակալ տեղավորման կարողություն սովորական՝ ոչ արտակարգ պայմաններում:

Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոններին ներկայացվող միջազգային չափանիշների համաձայն մշակված և ստորև ներկայացված պայմանները պետք է լիարժեք հաշվի առնեն առկա իրողությունները և երկրի տնտեսական իրավիճակը, ինչով պայմանավորված նախագծում կարող են կատարվել հետագա փոփոխություններ:

#### ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ – ՆԵՐՔԻՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ

Ծինություն (տարր/բաղադրիչ) Պահանջներ Մեկնաբանություններ

1. Սենյակներ Մեկ անձի համար նախատեսված սենյակի չափերը պետք է լինեն առնվազն 5 ք.մ, ներկառուցված լոգասենյակով (կամ առանց, տես մեկնաբանությունները):

Կահույք՝ մահճակալներ, զգեստապահարան, սեղան, աթոռներ, սառնարան (տե՛ս մեկնաբանություններ) և պատշաճ լուսավորում, օդափոխություն և ցեռուցում:

Տարբեր տեսակի սենյակներ

- Ընտանիքների համար (4 կամ 6 մահճակալ)
- Հաշմանդամություն ունեցող անձանց համար
- Միայնակ/չամուսնացած չափահասների համար



Գործող ԺՏԿ՝ առկա են երկտեղանոց սենյակներ, 18բ.մ չափերով, 9բ.մ. յուրաքանչյուր բնակչի համար Տեղավորման կենտրոնի պարտադիր տարրերը:

- Սենյակի չափեր
  - o ԵՄ անդամ պետություններում տարբերվում են (4բ.մ-ից մինչև 11բ.մ մեկ անձի համար)
  - o Երկտեղանոց սենյակը պետք է լինի 6բ.մ՝ մեկ անձի համար (ընդհանուր 12բ.մ)
  - o Ընտանեկան սենյակը պետք է ունենա լրացուցիչ 3բ.մ՝ մեկ անձի համար
  - o Լավագույն գործելակերպի օրինակը Հայաստանում է՝ երկսենյականոց սենյակի չափերը կազմում են 18բ.մ
- Սենյակը պետք է ունենա 2,4 մ բաձրություն:
- Ընտանեկան միսնությունը պետք է պահպանվի, ընտանիքի անդամները պետք է բնակեցվեն մեկ սենյակում: Այդ պատճառով անհրաժեշտ են ընտանեկան սենյակներ (և սենյակներ՝ կից սենյակով):
- Յուրաքանչյուր սենյակ պետք է ունենա ներսից փակվելու/կողպվելու հնարավորություն:
- Ներկառուցված լոգասենյակ
  - o Թերություններ
  - o Յուրաքանչյուր սենյակում ներկառուցված լոգասենյակով շինության կառուցումը ավելի ծախսատար է :
  - o Առավելություններ
    - o Անվտանգություն՝ այս կետը, մասնավորապես, վերաբերում է կանանց ու աղջիկներին, նրանք կարող են չօգտվել ընդհանուր օգտագործման լոգասենյակներից, որոնցից հիմնականում օգտվում են բոլոր բնակիչները
    - o Մաքրություն՝ բնակիչները կապահովեն իրենց լոգասենյակի մաքրությունը. միայն ընթացիկ ծախսերի համար գումար կամ մաքրման պարագաներ:
    - o Տեխնիկական սպասարկում. ընդհանուր օգտագործման լոգասենյակները մաքրելու համար անձնակազմ վարձելու կարիքը չկա:





o Հաշմանդամություն ունեցող անձինք՝ անձնական լոգասենյակները կարելի է հարմարեցնել սահմանափակ շարժունակություն ունեցող անձնաց կարիքներին:

- Սենյակների չափերը պետք է որոշվեն՝ կախված սենյակի կահույքից:
- Յուրաքանչյուր սենյակ պետք է ունենա սառնախցիկով սառնարան:
- Բնակիչները հաճախ բողոքում, թե իրենց սնունդը գողանում են ընդհանուր օգտագործման սառնարանից:
- Ընտանեկան սենյակներում պետք է տեղավորեն 4-ից 6 մահճակալ: Որոշ սենյակներ պետք է ունենան կից սենյակ:
- Հաշմանդամություն ունեցող անձանց սենյակները պետք է լինեն ամբողջությամբ հասանելի և կառուցվեն հաշվի առնելով այն, որ մի շարք անձինք տեղաշարժվում են հաշմանդամների սայլակներով և շարժունակությանն օժանդակող այլ պարագաների միջոցով:
- Չամուսնացած անձանց համար նախատեսված սենյակներում պետք է բնակվի մինչև 4 անձ (բացառությամբ արտակարգ իրավիճակների կամ տեղահանված անձանց զանգվածային ներհոսքի դեպքում): Չամուսնացած անձանց տեղավորումը պետք է կատարվի սեռի, տարիքի և ծագման երկրի հիման վրա:
- Յուրաքանչյուր սենյակ պետք է ունենա պատուհաններ: Պատուհաններին պետք է լինեն ճաղավանդակներ:
- Սենյակներում պետք է նախատեսված լինի լրացուցիչ (ազատ) տարածք՝ արտակարգ իրավիճակների կամ տեղահանված անձանց զանգվածային ներհոսքի դեպքում լրացուցիչ բնակիչներ տեղավորելու համար:

Առաջարկվում են սենյակների հետևյալ տարբերակները.

- Ընտանեկան սենյակներ 18 ք.մ. տարածքով,
- Ընտանեկան սենյակներ՝ կից սենյակով (սենյակներով)
- Մեկ (երկու) տեղանոց սենյակներ 12 ք.մ. տարածքով:

Քննարկման ընթացքում առաջարկվել է դիտարկել լոգարան-սանհանգույցների մի քանի տարբերակներ (ներառյալ անհատական և ընդհանուր բաղնիք-սանհանգույցների տարբերակները):



2. Ճաշարան Մեկ անձի համար նախատեսվող տարածքը պետք է լինի առնվազն 1.3ք.մ կամ ընդհանուր չափերը առնվազն 22ք.մ:

Աթոռներով և սեղաններով: Պարտադիր կամ ընտրովի (կախված համակարգից)

- Ճաշարանը պետք է մաս կազմի «խոհանոցային համալիրին»: Մնունդը պատրաստվում է տեղում և բնակիչներին մատակարարվում ճաշարանում:
- Ճաշարանը կարող է գտնվել առանձին սենյակում՝ եթե մթերքը կամ կերակուրը մատակարարվում են բնակիչներին:
- Ճաշարան՝ որպես կենտրոնում գտնվող խոհանոցի մաս
  - o Թերություններ
  - o Պետք է պատշաճ կերպով սպասարկվի (և՛ խոհանոցը, և՛ ճաշարանը):
  - o Պետք է ապահովվեն սանիտարական պայմանները:
    - o Ճաշարանը պետք է կազմի խոհանոցային համալիրի մաս. այսպիսով, համալիրը առնվազն ընդգրկում է խոհանոց, ճաշարան, պահեստներ, սառնարանների համար նախատեսված սենյակ:
    - o Ճաշարանը պետք է համապատասխանի սանիտարահիգիենիկ և առողջապահական դրույթների պահանջներին:
    - o Բնակիչները սովորաբար բողոքում են մատակարարվող ճաշատեսակների որակից, երբ դրանք պատրաստվում և մատակարարվում են կենտրոնի խոհանոցի կողմից:
    - o Ճաշատեսակների վերաբերյալ պետք է խորհրդակցել բնակիչների հետ՝ եթե դրանք մատակարարվում են կենտրոնի խոհանոցի կողմից:
    - o Կենտրոնի խոհանոցի կողմից պատրաստված և մատակարարված ճաշատեսակները պետք է համապատասխանեն մշակութային նորմերին և սննդակարգի պահանջներին. փաստորեն, անհրաժեշտ է օրական պատրաստել մի քանի ճաշատեսակ:
    - o Առավելություններ
    - o Մնունդը պատրաստվում և մատակարարվում է բոլոր բնակիչներին:
    - o Հարևանների, տղվալ շրջանի բնակիչների համար ստեղծվում են աշխատատեղեր:



- ճաշարան՝ առանց խոհանոցային համալիրի:
  - o Թերություններ
    - o Սնունդը պետք է մատակարարվի սնունդ պատրաստող ընկերության կողմից (պատրաստվում է ԺՏԿ-ից դուրս): Անհրաժեշտ է գտնել և պայմանագիր կնքել համապատասխան ընկերության հետ, ինչը կարող է դրական ազդեցություն ունենալ ընդունող երկրի հասարակության վրա (ապահովում է իրատեսական եկամուտ և աշխատատեղեր)
    - o Առաջարկված բոլոր ճաշատեսակները պետք է մատակարարվեն ճաշարանում
    - o Առավելություններ
      - o Արտակարգ իրավիճակներում (ապաստան հայցողների զանգվածային ներհոսք) ճաշարանը կարող է ծառայել որպես լրացուցիչ սենյակ և կարող է ժամանակավոր հարմարեցվել որպես բնակելի սենյակ

#### Դիտողություններ՝

Ա. Համաձայն գործող ընթացակարգերի , սննդամթերքը ԺՏԿ բնակիչներին տրամադրում է հատուկ սենյակում: Բնակիչները հնարավորություն ունեն օգտվելու ընդհանուր օգտագործման ճաշարանից և կարող են պատրաստել իրենց կերակուրը: Ավելին, բոլոր բնակիչներին տրամադրում են նույն մթերքը անկախ իրենց տարիքից և սննդակարգի պահանջներից: Սննդակարգին և մշակույթին առնչվող նորմերը ամբողջովին համապատասխանեցված չեն պահանջվող կարգին: Այդ իսկ պատճառով, ավելի նպատակահարմար է, որ բնակիչները իրենք գնեն մթերքն ու կերակուր պատրաստեն: Այս դեպքում նրանք են որոշում ինչ են գնելու, որքան և ինչ հաճախականությամբ: Բնակիչներին կարելի է տրամադրել ֆինանսական նպաստ կամ վաուչերներ: Նման մոտեցումը նաև դրական ազդեցություն կունենա ընդունող երկրի հասարակության վրա (բնակիչները կգնեն մթերքը հարևանությամբ գործող խանութներից):

Բ. Բնակիչներին ֆինանսական նպաստ կամ վաուչերներ տրամադրելու դեպքում չի առաջանում ճաշարանի անհրաժեշտություն: Բնակիչները կարող են պահեստավորել մթերքը, սևվել իրենց սենյակներում (ընդհանուր օգտագործման խոհանոցները այդքան հրապուրիչ չեն): Ի լրումն ասվածի՝ ընդհանուր օգտագործման խոհանոցներում պետք է տեղադրվեն սեղաններ և աթոռներ:

Գ. Այն բնակիչները, որոնց տրամադրվում է մթերք, սովորաբար չեն սևվում ճաշարանում: Նրանք մթերքը օգտագործում են իրենց սենյակներում:



Դ. Պատրաստի կերակուրը կամ մթերքը պետք է տրամադրվի ամեն օր: Ֆինանսական նպաստ կամ վաուչերների տրամադրումը(օրինակ՝ ամսական մեկ անգամ) կարող է լուծել որոշ խնդիրներ:

Ե. ճաշարանի առկայությունը անհրաժեշտ չէ, եթե բնակիչներն իրենց կերակուրը կարող են պատրաստել ընդհանուր օգտագործման խոհանոցում: Ընդհանուր օգտագործման խոհանոցները պետք է կահավորվեն աթոռներով և սեղաններով:

2. Եթե բնակիչներն իրենց կերակուրը պատրաստում են ընդհանուր օգտագործման խոհանոցում, ավելի նպատակահարմար է յուրաքանչյուր սենյակում տեղադրել սառնարան:

3. Ընդհանուր օգտագործման խոհանոց Առանձին խոհանոց՝ տեղավորման կենտրոնի յուրաքանչյուր հատվածում

Խոհանոցում պետք է լինեն էլեկտրական կամ գազօջախ, վառարաններ, խոհանոցի կոնք և կերակուր պատրաստելու հատուկ վայր, սպասքի չորանոց: Սառնարան (տե՛ս կետ 1):

Պետք է տեղադրել նաև սեղան և աթոռներ: Սննդամթերքի, սպասքի և նմանօրինակ այլ առարկաների պահման նպատակով խոհանոցում յուրաքանչյուր ընտանիքի համար պետք է տեղադրված լինեն անհատական կողպվող սպասքապահարաններ:

Պարտադիր կամ ընտրովի (կախված համակարգից)

- Թերություններ
  - o Չբաղվածության կենտրոնի յուրաքանչյուր հատված պետք ունենա իր խոհանոցը, ինչը հանգեցնում է լրացուցիչ ծախսերի և պահանջում է տեխնիկական սպասարկում:
- Առավելություններ
  - o Բնակիչները կարող են պատրաստել իրենց կերակուրը ցանկացած ժամանակ:
  - o Խոհանոցի և ճաշարանի անհրաժեշտությունը չկա:
  - o Կենտրոնում ապրող բնակիչների համար ստեղծում է ինտեգրման հանրավորություններ:



- Բոլոր սենյակները հնարավոր չէ հագեցնել սառնարանով, դրանք պետք է գտնվեն ընդհանուր օգտագործման տարածքում: Առնվազն երեք սառնախցիկով սառնարան յուրաքանչյուր՝ խոհանոցում:
- Քննարկմանն առաջարկություն է ներկայացվել ապա ԺՏԿ-ն ապահովել ընդհանուր օգտագործման խոհանոցներով, որոնք պետք է համալրված լինեն համապատասխան սարքավորումներով և կահույքով:

#### 4. Լվացքա

սենյակ Չափերի վերաբերյալ պահանջ չկա: Սենյակում պետք է տեղադրվեն լվացքի մեքենա (1 մեքենա՝ 20 բնակչի համար) և չորացնող սարքեր: Սենյակը պետք է նաև ապահովված լինի արդուկի տախտակով:

##### Պարտադիր

- Բնակիչները պետք է հնարավորություն ունենան լվանալու և չորացնելու իրենց հագուստը
- Տեղավորման կենտրոնի յուրաքանչյուր հատվածում պետք է լինի լվացքասենյակ: Կարող է նաև լինել մեկ լվացքասենյակ՝ բոլոր բնակիչների համար:
- Եթե լվացքասենյակները առկա են յուրաքանչյուր բնակելի տարածքում՝ ընտանիքների հատվածում պետք է լինեն թվով ավելի շատ լվացքի մեքենաներ և չորացնող սարքեր:

#### 5. Ընդհանուր օգտագործման լոգա-

սենյակներ Առանձին կանանց և տղամարդկանց համար:

Համաձայն Լեհաստանի չափանիշներին՝ յուրաքանչյուր 10 կնոջ և 20 տղամարդու համար պետք է տրամադրվի մեկ զուգարանակոնք, մեկ պիսուար՝ յուրաքանչյուր 20 տղամարդու համար, մեկ ցնցուղ՝ 15 կնոջ և տղամարդու համար և մեկ լվացարան՝ յուրաքանչյուր 5 անձի ահամր:

Անհրաժեշտ է երաշխավորել առձանձնացվածությունը/ մեկուսացվածությունը:

Ընդհանուր օգտագործման լոգասենյակներ.



### Թերություններ`

- Անվտանգություն և պաշտպանություն` բոլոր բնակիչները կարող են օգտվել ընդհանուր օգտագործման լոգասենյակներից, ինչը կարող է դառնալ բռնության և դաժան վերաբերմունքի օջախ (ուղղված կանանց և աղջիկներին, նաև տղաներին ու տղամարդկանց):
- Առանձնացվածություն ` ընդհանուր օգտագործման լոգասենյակները չեն ընձեռում լիարժեք մեկուսացվածության հնարավորություն:
- Տեխնիկական սպասարկում` ընդհանուր օգտագործման սենյակները պետք է կանոնավոր կերպով մաքրվեն` այդ նպատակով վարձած անձնակազմի կողմից:

### Առավելություններ`

- Շինությունների և շահագործման ծախսերը (օրինակ` ջրի օգտագործում, տեխ.սպասարկում):
- Անվտանգություն և պաշտպանություն` ներկառուցված լոգասենյակները սահմանափակում են բռնության և դաժան վերաբերմունքի վտանգը: Երաշխավորվում է սոճանձնացվածությունը: Կանայք և աղջիկները ավելի հուսալի են պաշտպանված:
- Բնակիչները իրենք են մաքրում իրենց լոգասենյակները, տրամադրվում են մաքրման պարագաներ:
- Բնակիչները չեն բողոքում ընդհանուր օգտագործման լոգասենյակների մաքրությունից:

## 6. Բազմակի

Նշանակության սենյակ Չափերը` առնվազն 30ք.մ:

Կահավորված է աթոռներով, սեղանով, համակարգչով, հեռուստացույցով, կառավրման վահանակով, DVD/CD սկավառակների նվազարկչով և ձայնային սարքավորումներով:  
Պարտադիր.

## Բազմակի

Նշանակության սենյակը կարևոր է բնակիչների միջև պատշաճ հաղորդակցություն ապահովելու համար: Այն ծառայում է որպես հանդիպումներ և վերապատրաստումներ



կազմակերպելու սենյակ: Սենյակը պետք է ունենա 20-30 անձ տեղավորելու հնարավորություն:

Սենյակում պետք է լինեն կառավարման վահանակ, աթոռներ, էկրան, համակարգիչ, հեռուստացույց, DCD/CD սկավառակների նվագարկիչ, ինչպես նաև այլ անհրաժեշտ սարքավորումներ՝ ներկայացումներ, հոռուստաֆիլմեր ցուցադրելու համար:

Տեղավորման ամբողջ կենտրոնը պետք է ունենա բազմակի

նշանակության մեկ սենյակ:

Այն պետք է ունենա հատուկ համակարգ՝ անհրաժեշտության դեպքում փոքր սենյակները որմնախորշի(երի) բաժանելու համար:

Գործող ԺՏԿ-ում առկա է բազմակի

նշանակության սենյակ:

Լավագույն գործելակերպը պետք է շարունակել:

7. Այցելուների սենյակ Չափեր՝ 10բ.մ Պարտադիր.

Այս սենյակը միտված է իրավաբանների, սոցիալական աշխատողների և այլ անձնակազմի հետ առանձին հանդիումներ կազմակերպելու համար: Այցելուների սենյակում պետք է լինեն աթոռներ և սեղան:

Նման սենյակ գործում է ներկայիս ԺՏԿ-ում, որտեղ բնակիչները կարող են առանձին հանդիպել ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի ներկայացուցիչների, իրավաբանների և այլ անձնաց հետ: Լավագույն գործելակերպը պետք է շարունակել:

8. Այցելուների սենյակ (2) Տարածքը՝ 10 բ.մ. Պարտադիր

Անհրաժեշտ է նախատեսել ևս մեկ առանձին սենյակ բնակիչներին այցելող ընկերների և այլ այցելուների համար: Դա չպետք է լինի այն նույն սենյակը, որտեղ տեղի են ունենում հանդիպումներ իրավաբանի կամ սոցիալական աշխատողի հետ:

9. Բժշկական օգնության սենյակ Չափերը՝ առնվազն 12բ.մ Խորհուրդ է տրվում.



Սենյակը, նպատակին ծառայեցնելու համար, պետք է հագեցած լինի անհրաժեշտ սարքավորումներով: Այն պետք է գործի համաձայն ՀՀ համապատասխան օրենքին և կանոնակարգերին՝ համապատասխանելով բոլոր սանիտարական և համաճարակաբանական պահանջներին: Կարող է նաև նախատեսվել բժշկական պահեստի սենյակ:

#### Թերություններ

- Պահանջում է լրացուցիչ ֆինանսավորում (վարձատրություն և ընթացիկ ծախսեր)
- Բարձրացնում է շինարարության արժեքը

#### Առավելություններ

- Բնակիչներն ապահովված են իրենց հասկանալի լեզվին տիրապետող բուժանձնակազմի կողմից մատուցվող մասնագիտական ծառայություններով
- Բնակիչներն անցնում են առնվազն ընդհանուր բժշկական զննում կենտրոն տեղափոխվելուն պես
- Բժշկական ծառայությունների հասանելիությունը տեղում կարող է կանխել վարակիչ հիվանդությունների տարածումը այլ բնակիչների շրջանում, քանի որ դրանք կհայտնաբերվեն ավելի արագ ու արդյունավետ:

Քննարկման ընթացքում կարծիք հնչեցվեց, որ ԺՏԿ բնակիչները կարող են բժշկական օգնություն և սպասարկում ստանալ տարածքային պոլիկլինիկաներում, ուստի ապագա կենտրոնում բժշկական օգնության սենյակ կարող է ընդհանրապես չնախատեսվել:

10. Բուժֆույրի սենյակ Չափ՝ առնվազն 12բ.մ Սենյակը կարող է լինել բժշկի և բուժֆույրի ընդհանուր օգտագործման սենյակ (խորհուրդ չի տրվում, երբ բժիշկը զննում է հիվանդին, իսկ որոշակի օգնություն ցուցաբերում է միայն բուժֆույրը: Այս երկու գործողությունները նույն սենյակում միաժամանակ չպետք է իրականացվեն: Բուժֆույրի սենյակը պետք է կցված լինի բժշկի սենյակին):





Սենյակը, նպատակին ծառայեցնելու համար, պետք է հագեցած լինի անհրաժեշտ սարքավորումներով: Այն պետք է գործի համաձայն ՀՀ համապատասխան օրենքին և կանոնակարգերին՝ համապատասխանելով բոլոր սանիտարական և համաճարակաբանական պահանջներին:

Սենյակը պետք է կից գտնվի բժշկի սենյակին: Բուժքույրը հիմնականում պետք է գտնվի տեղավորման կենտրոնում շաբաթվա օրերին, իսկ բժիշկը կարող է աշխատել նշանակված օրերին: Խորհուրդ է տրվում բժշկին և բուժքրոջը հատկացնել առանձին սենյակներ:

Պետք է առկա լինի բժշկական պահեստի սենյակ:

Քննարկման ընթացքում առաջակություն ներկայացվեց, որ ապագա ԺՏԿ-ում բուժքույրի ներկայությունը կարող է նպատակահարմար լինել բնակիչների համար, մինչդեռ մասնագիտական բժշկական ծառայությունները կարող են մատուցվել համապատասխան պոլիկլինիկաներում:

Անհրաժեշտության դեպքում բուժքրոջ սենյակում կստեղծվի ժամանակավոր պատվաստումային կետ և կացարանի բնակիչների պատվաստումները կիրականացվեն արտազնա պատվաստումային խմբերի միջոցով:

11. Մեկուսացված հիվանդասենյակ Պարտադիր է (կախված ապաստան հայցողներին ցուցաբերվող բժշկական օգնության համակարգից

Վարակիչ հիվանդություններով տառապող բնակիչներին պետք է առանձնացնել՝ մինչև լիովին կազդուրվելը:

ՀՀ օրենքով սահմանված բոլոր միջոցառումները պետք է իրականացվեն վարակի տարածումը նվազեցնելու և այլ բնակիչներին պաշտպանելու նպատակով:

12. Հոգեբանի սենյակ Չափերը՝ առնվազն 10ք.մ

Կահավորված է առնվազն աթոռներով և սեղանով Պարտադիր է.

Հոգեբանի առանձին սենյակում բնակիչերը կստանան հոգեբանական օգնություն:



Սենյակի պատերը պետք է ներկվեն հանգստացնող, փափուկ գույներով(օրինակ՝ բաց դեղնագույն, սպիտակ), պետք է առկա լինեն աթոռներ և սեղան:

13. ԴասասենյակՉափերը՝ առնվազն 15ք.մ

Սենյակում առվազն պետք է լինեն գրատախտակ, աթոռներ և սեղաններ: DVD/CD նվագարկիչ, համակարգիչ և ականջակալներ

Պարտադիր է.

Առանձին դասասենյակ հայերեն լեզվի դասընթացների և մասնագիտական վերապատրաստման դասընթացի համար, անհրաժեշտության դեպքում: Պետք է ունենա ուսման համար անհրաժեշտ պարագաներ՝ գրատախտակ, աթոռներ և սեղաններ, հեռուստացույց, DVD/CD նվագարկիչ, համակարգիչ և ականջակալներ ու բարձրախոսներ:

14. Գրադարան Պահանջներ չկան Ընտրովի.

Տեղավորման կենտրոնում կարող է լինել գրադարան: Բնակիչները պետք է հնարավորություն ունենան, հայերեն, ինչպես նաև իրենց մայրենի լեզվով, ընթերցելու գրքեր և թերթեր: Պետք է առկա լինեն երեխաների և մեծահասակների համար գրքեր:

15. Համակարգչա

յին սենյակ Պահանջներ չկան Ընտրովի.

Եթե տեղավորման կենտրոնում բնակիչների համար գործում են շարժական ինտերներ ծառայություններ, համակարգչային սենյակը անհրաժեշտ չէ: Այնուամենայնիվ, սենյակը կարող են օգտագործել անձինք որոնք չունեն անձնական համակարգիչ:

Գրադարանը և համակարգչային սենյակը կարող են լինել մեկ սենյակում:



Գործող ԺՏԿ-ում բնակիչների համար ներկայումս կա համակարգիչ: Որոշ բնակիչներ օգտագործում են այն իրենց ընտանիքների հետ կապ պաշտպանելու համար: Լավագույն գործելակերպը պետք է շարունակել:

16. Մարզասրահ Պահանջներ չկան Ընտրովի.

Մարզասրահից կարող են օգտվել երեխաները և մեծահասակները: Այնտեղ կարող են իրականացվել բնակիչների համար որոշ ծրագրեր: Մարզասրահը կարող է հետաքրքրել, մասնավորապես, տեղավորման կենտրոնում բնակվող տղամարդկանց:

Սենյակում պետք է լինեն անվճար սպորտային ծանրաքարեր և սպորտային վարժությունների սարքեր: Այն կարող է նաև ծառայել ֆիզիկական այլ նպատակներին և պարունակել սպորտային գորգեր, գնդակներ, և այլն:

17. Երեխաների խաղասենյակ, խնամքի կենտրոն, մանկապարտեզ Չափեր՝ առնվազն 15 բ.մ. Ընտրովի.

Այս սենյակը նախատեսված է երեխաների խաղերի և ուսման համար: Այնտեղ պետք է լինեն աթոռներ և սեղաններ, գրադարակներ, հեռուստացույց, CD/DVD սկավառակների նվագարկիչ, կառավարման վահանակ, խաղալիքներ, խաղերի պարագաներ: Սենյակը և սենյակի կահույքը պետք է հարմարեցվեն երեխաների կարիքներին: Խորհուրդ է տրվում երեխաների խաղասենյակին կից լոգասենյակը միմյանցից առանձնացնել:

Երեխաների խաղասենյակը և խնամքի կենտրոնը որոշ դեպքերում կարող են գործել առանձին սենյակների տեսքով: Վերջինս պետք է գործի դասաժամերին և նախատեսված է մինչև 7 տարեկան երեխաների համար: Առաջինը՝ երեխաների խաղասենյակը, գործում է դասաժամերից հետո: Այս սենյակը նախատեսված է տարիքով ավելի մեծ երեխաների համար: Այստեղ նրանց օգնում են կատարել տնային աշխատանքը և կազմակերպվում են լեզվի լրացուցիչ դասեր:

Երեխաների սենյակում պետք է աշխատի պատշաճ կերպով նախապատրաստված անձնակազմ: Սենյակը պետք է գործի շաբաթվա օրերին:



18. Աղդթասենյակ Չափեր՝ մոտ 10բ.մ Պարտադիր.

Բնակիչները պետք է աղդթասենյակի մուտք ունենան:

19. Պահեստ Հատուկ ցուցումներ չկան Պարտադիր.

Անհրաժեշտ է սարքավորումները պահեստավորելու համար: Բնակիչների համար հասանելի չէ:

20. Կանանց համար նախատեսված ընդհանուր օգտագործման սենյակ Մոտ 15բ.մ, կահավորված է աթոռներով և հեռուստացույցով Պարտադիր կամ ընտրովի (կախված համակարգից).

Այս սենյակը ծառայում է բացառապես որպես կանանց հանդիպելու, զրուցելու և ժամանցի վայր: Սակայն, բնակիչները հաճախ չեն օգտվում նման սենյակներից: Այդ իսկ պատճառով, խորհուրդ է տրվում հեռուստացույց տեղադրել յուրաքանչյուր բնակելի սենյակում: Այս դեպքում կանանց համար նախատեսված ընդհանուր օգտագործման սենյակի կարիքը չի լինի:

Յուրաքանչյուր հատվածում կարող է առկա լինել ընդհանուր օգտագործման սենյակ, որտեղ տեղադրված են հեռուստացույց, խաղերի պարագաներ, թենիսի սեղան և այլն: Այս դեպքում սեռական պատկանելիության հիման վրա բաժանումը պարտադիր չէ:

21. Տղամարդկանց համար նախատեսված ընդհանուր օգտագործման սենյակ Մոտ 15բ.մ. , կահավորված է աթոռներով և հեռուստացույցով Պարտադիր կամ ընտրովի (կախված համակարգից).

Այս սենյակը ծառայում է բացառապես որպես տղամարդկանց հանդիպելու, զրուցելու և ժամանցի վայր: Սակայն, բնակիչները հաճախ չեն օգտվում նման սենյակներից: Այդ իսկ պատճառով, խորհուրդ է տրվում հեռուստացույց տեղադրել յուրաքանչյուր բնակելի սենյակում: Այս դեպքում տղամարդկանց համար նախատեսված ընդհանուր օգտագործման սենյակի կարիքը չի լինի:



Յուրաքանչյուր հատվածում կարող է առկա լինել ընդհանուր օգտագործման սենյակ, որտեղ տեղադրված են հեռուստացույց, խաղերի պարագաներ, թենիսի սեղան և այլն: Այս դեպքում սեռական պատկանելիության հիման վրա բաժանումը պարտադիր չէ:

22. Պահակասենյակ/անվտանգության աշխատակցի սենյակ (և անվտանգությանն առնչվող հարցեր) Պարտադիր.

Հիմնական շինությունում պետք է լինի մեկ պահակասենյակ/անվտանգության աշխատակցի սենյակ: Անվտանգության աշխատակիցները պետք է գտնվեն շինությունում 24/7: Հնարավորության դեպքում, անվտանգության աշխատակցի սենյակը պետք է լինի բնակելի տարածքում (մասնավորապես, համատեղ բնակելի շինությունում):

Կենտրոնը պետք է վերահսկվի և պաշտպանվի 24/7:

Կախված տեղավորման կենտրոնի համալիրից.

Առանձին շինությունների առկայության դեպքում, անվտանգության աշխատակցի սենյակը պետք է լինի բոլոր շինություններում (մասնավորապես չամուսնացած կանանց հատվածում):

Ցանկացած հատվածում (կամ շինությունում) կարող է լինել քարտային մուտքի վերահսկման համակարգ, այնպես որ, միայն տվյալ հատվածի (շինության) բնակիչները կարող են այնտեղ մուտք գործել: Այս տարբերակի դեպքում պետք է տեղադրվեն թվային քարտեր կարդացող սարքեր, ինչպես նաև էլեկտրոնային(հատուկ) փակվող սարքեր:

23. Անձնակազմի սենյակ (-ներ) Պարտադիր.

Ապագա ԺՏԿ-ում աշխատող անձնակազմի համար անհրաժեշտ է ապահովվել պատշաճ աշխատանքային պայմաններ: Անձնակազմը պետք է ունենա հատուկ սենյակ, որը



հասանելի չի լինի բնակիչների համար: Առաջարկվում է ԺՏԿ անձնակազմի համար նախատեսել 2 առանձին սենյակներ:

Չերթապահ աշխատակցի (սոցիալական աշխատակցի) համար անհարժեշտ է ապահովել հատուկ սենյակ՝ բնակիչներին օգնություն ցուցաբերելու նպատակով: Այս սենյակը կարելի է փոխարինել հիմնական նախասրահում գտնվող ընդունարանով:

Անձնակազմի սենյակը (կամ հատվածը) պետք է անվտանգ լինի: Անձնակազմը պետք է հնարավորություն ունենա ներսից փակել/կողպել այս հատվածը:

#### ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

#### ԱՐՏԱՔԻՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ/ՏԱՐՐԵՐ

24. Երեխաների համար նախատեսված խաղասենյակ Չվարճանքի համար նախատեսված սարքավորումով հագեցած և ցանկաատված՝ սենյակում խաղացող երեխաների անվտանգությունն ապահովելու համար:

Խաղասենյակի չափերի վերաբերյալ չկան հատուկ ցուցումներ:

Պարտադիր.

Տեղավորման կենտրոնում բնակվող երեխաները խաղասենյակում կարող են զվարճանալ և խաղալ: Խաղասենյակի պարագաներն են՝ ավազարկո, ճոճանակ, սղարան, բատուտ, կարուսել, մանկական սարք «ջունգլի», ճոճանակ զսպանակի վրա, և երեխաների համար նախատեսված այլ սարքեր: Բոլոր սարքերը պետք է համապատասխանեն անվտանգության չափանիշներին (բացի այդ, պետք է ունենան բոլոր անհրաժեշտ անվտանգության վկայականները)՝ հարմարեցված լինելով երեխաների տաիքին և կարիքներին:

Երեխաների և մեծահասակների համար պետք է առկա լինեն նստարաններ:



25. Խաղահրապարակ/խաղադաշտ Չափեր՝ առնվազն 50ք.մ Որոշ չափով պարտադիր.

Պետք է առկա լինի սպորտային տարածք ֆուտբոլ, վոլեյբոլ և բասկետբոլ, ինչպես նաև այլ սպորտային խաղեր խաղալու համար: Խաղահրապարակի/խաղադաշտի մակերեսը պետք է լինի վանդակավոր բրոյա գործվածքից կամ այլ արհեստական կտորից (ինչը կպաշտպանի վնասվածքներից): Այն պետք է լինի բազմաֆունկցիոնալ սպորտային դաշտ: Ներգրավելով հարևան բնակիչներին՝ խաղահրապարակում խաղերը կխթանեն ապաստան հայցողների ինտեգրումն և փոխադարձ ընդունումը:

26. Այգի Չատուկ ցուցումներ չկան Ընտրովի.

Առանձին հողատարածք՝ մրգեր, բանջարեղեն և բույսեր տնկելու ու մշակելու համար:

27. Կայանատեղի Չատուկ ցուցումներ չկան Որոշ չափով պարտադիր.

Տեղավորման կենտրոնի դիմացը պետք է լինի կայանատեղի, որտեղ, օրինակ՝ բնակիչները, աշխատակիցներն ու այլ անձինք կկայանեն իրենց մեքենաները:

28. Ցանկապատ և դարպաս (և արտաքին լուսավորություն) Պարտադիր

Տեղավորման կենտրոնը պետք է ունենա ցանկապատ: Պետք է նաև լինի դարպաս:

Ցանկապատը կարող է լինել մետաղալարից, չափավոր բարձր: Գլխադիրը չպետք է լինի փշալարից:



Կենտրոնի տարածքը պետք է ապահովված լինի արտաքին լուսավորության պատշաճ համակարգով: Դա կնպաստի անվտանգության մակարդակի բարձրացմանն ինչպես բնակիչների, այնպես էլ անձնակազմի համար:

ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ԾԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ/ՀԱՏՎԱԾՆԵՐ

Մեկնաբանություններ

Ընդունման կենտրոնի համալիր

A – բնակելի հատված 1

B - բնակելի հատված 2

C - բնակելի հատված 3

D - խաղաղաշտ, խաղահրապարակ, այգի

E – հիմնական շինություն

Կետավոր գիծ = ցանկապատ

Ընդունման կենտրոնի համալիր

A – մեկ բնակելի շինություն՝ առանձին հատվածներով

B - խաղաղաշտ, խաղահրապարակ, այգի

C - հիմնական շինություն





Կետավոր գիծ = ցանկապատ

Բնակելի շինություն՝ երկու հատվածներով և երկու առանձին մուտք

Բնակելի շինություն

A, B և C – բնակելի հատվածներ

D – միջանցք, ընդհանուր օգտագործման տարածք (դասասենյակի, մանկապարտեզի համար տարածք, և այլն)

Բնակելի հատված (տարբերակ 1)

A – ընդհանուր օգտագործման խոհանոց

B - սենյակ

D - մուտք

Bc – ընդհանուր օգտագործման լոգասենյակ

E – հատուկ բաժանող դռներ, որոնց կարելի է տեղաշարժել բնակելի մեկ հատվածը մեծացնելու կամ սահմանափակելու համար

G – ընդհանուր օգտագործման սենյակ

Բնակելի հատված (տարբերակ 2)

B - սենյակ



D - մուտք

E - հատուկ բաժանող դռներ, որոնց կարելի է տեղաշարժել բնակելի մեկ հատվածը մեծացնելու կամ սահմանափակելու համար

G - ընդհանուր օգտագործման սենյակ

Բնակելի հատված (տարբերակ 3)

A/G - ընդհանուր օգտագործման խոհանոց/ ընդհանուր օգտագործման սենյակ

B - սենյակ

Bc - ընդհանուր օգտագործման լոգասենյակ

E - մուտք

Բնակելի շինություն

A – մեծ հատված (օրինակ՝ ընտանիքների համար նախատեսված հատված)

B և C – փոքր հատվածներ, նրանց տարածքը և կարողությունը կարող են փոփոխվել հատուկ բաժանող դռների օգնությամբ

Սլաք = մուտք

Սենյակ/ննջարան (առանց խոհանոցի)

A – բնակելի տարածք

B - լոգասենյակ



Սենյակ/նկարան (խոհանոցի հետ)

A – բնակելի տարածք

B – լոգասենյակ

C - խոհանոց

D - մուտք



Հավելված 2 – Հայաստանի Հանրապետության կողմից ապաստան հայցողների ժամանակավոր բնակեցման համար անհրաժեշտ պայմանների գործող ցանկը:

Պահանջ, մոտեցումներ Աղբյուրը Մեկնաբանություն

1. Սենյակներ՝ կառուցված հաշմանդամություն ունեցող անձանց հատուկ կարիքները հաշվի առնելով: 4.14 Ապաստան հայցողների ԱՀԺԲԿ -ում (ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոն) տեղավորման գործառույթը:

Համաձայն գործառույթի՝ հաշմանդամություն ունեցող անձանց հատկացվում է հատուկ սենյակ:

Նոր կենտրոնը պետք է ունենա հաշմանդամություն ունեցող անձանց համար անհրաժեշտ բոլոր համապատասխան հարմարությունները (սան. հանգույցներ, խոհանոցներ և բոլոր այլ սենյակները):

Ներկայումս կենտրոնն ունի երկու սենյակ, ուր տեղավորված են հաշմանդամություն ունեցող անձիք: Այս մոտեցումը պետք է շարունակել կիրառել:

2. Մատակարարման սենյակ Կետ 5.6 Ապաստան հայցողների ԺՏԿ -ում (Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոն) տեղավորման գործառույթը:

Համաձայն գործառույթի՝ սնունդը կենտրոնի բնակիչներին մատակարարվում է մատակարարման սենյակում:

Կենտրոնում մատակարարման սենյակ ունենալու պահանջը ուժի մեջ չէ, եթե կիրառվում է սուբսիդավորման և/կամ սննդի վաուչերների համակարգը: Այս պարագայում, բնակիչները իրենք են ձեռք բերում սնունդ և պատրաստում են այն ընդհանուր խոհանոցում:

Հնարավոր է կատարվեն փոփոխություններ:

3. Դասասենյակ 5.11 Ապաստան հայցողների ԺՏԿ -ում (Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոն) տեղավորման գործառույթը:



Համաձայն գործառույթի՝ ԺՏԿ տնօրենը կազմակերպում է լեզվի դասընթացներ կենտրոնի բնակիչների (հիմնականում եռեխաների) համար: Վերապատրաստման ծրագրեր կարող են կազմակերպվել նաև ՀԿ-ների և այլ շահագրգիռ մարմինների կողմից: Կենտրոնում առկա է դասասենյակ (բազմակի նշանակության սենյակ): Այս մոտեցումը պետք է շարունակել կիրառել:

4. Կրոնական ծեսերի համար նախատեսված սենյակ 5.12 Ապաստան հայցողների ԺՏԿ -ում (Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոն) տեղավորման գործառույթը:

Համաձայն գործառույթի՝ երաշխավորվում են մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքները: Բնակիչները կարող են իրականացնել կրոնական ծեսեր՝ դրանց համար հատկացված համապատասխան վայրերում:

Ներկայումս, կենտրոնը աղոթասենյակ չունի:

5. Բժշկական զննում և օգնություն “Փախստականների և ապաստանի մասին” ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասը:

Կետ 6 Ապաստան հայցողների ԺՏԿ -ում (Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոն) տեղավորման գործառույթը:

Համաձայն օրենքի պահանջներին՝ բժշկական օգնությունը տրվում է անվճար: Հայցողների համար, մասնավորապես նոր ժամանած, բժշկական զննումը պարտադիր չէ (կետ 6.1): Եթե զննումը պետք է իրականացվի, ապա այն պետք է տեղի ունենա պոլիկլինիկայում ( կետ 6.2): Կենտրոնում պետք է լինի բժշկական սենյակ, բնակիչներին (այդ թվում նոր ժամանած) համապատասխան զննում և օգնություն տրամադրելու համար:

Խորհուրդ է տրվում “Փախստականների և ապաստանի մասին” ՀՀ օրենքի 23-րդ հոդվածում ավելացնել բժշկական զննման պարտադիր լինելու հանգամանքը:



Այս դեպքում, համապատասխան հնարավորություններ պետք է ստեղծվեն, որոնցից մեկը՝ կենտրոնում բժշկական սենյակ ունենալն է:

6. Հանրային առողջությունը Կետ 6.3 Ապաստան հայցողների ժՏԿ -ում (Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոն) տեղավորման գործառույթը:

Վարակ կրող անձին կարող է արգելվել մուտք գործել կենտրոն: Հստակ չէ, թե ի՞նչ է նշանակում «վարակ կրել»: Ավելին, պարզ չէ, թե ի՞նչ պետք է արվի, ո՞վ է գնահատում անձը վարակ կրում է թե ոչ, ո՞ւր պետք է գնա կենտրոնի բնակիչը, ի՞նչ անի և ի՞նչ պայմաններում նա կրկին կկարողանա մուտք գործել կենտրոն:

Խորհուրդ է տրվում փոփոխել այս դրույթը, քանզի այն հստակ չէ: Կենտրոնը պետք է ունենա բժշկական սենյակ և մեկուսացված հիվանդասենյակ: Սա կօգնի պահպանել հանրային առողջությունը և կերաշխավորի համապատասխան խնամքը:

7. Սենյակի կահավորումը Կետ 4.11 Ապաստան հայցողների ժՏԿ -ում (Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոն) տեղավորման գործառույթը:

Ամեն սենյակում/ննջասենյակում պետք է առկա լինի կահույքի ցանկ: Խորհուրդ է տրվում ավելացնել այդ ցուցակների միանման լինելու կետը: Երեխաներին պետք է տրամադրվի համապատասխան կահույք (օրորոցներ, մանկական աթոռներ և այլն):

8. Բնակիչներին սնունդով ապահովումը “Փախստականների և ապաստանի մասին” ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասը:

Կետ 5.1 Ապաստան հայցողների ժՏԿ -ում (Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոն) տեղավորման գործառույթը:

Կետ 5.4 Ապաստան հայցողների ժՏԿ -ում (Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոն) տեղավորման գործառույթը:



Կետ 5.5 Ապաստան հայցողների ԺՏԿ -ում (Ապաստան հայցողների Ժամանակավոր տեղավորման կենտրոն) տեղավորման գործառույթը:

Կետ 19 Ապաստան հայցողների ԺՏԿ -ում (Ապաստան հայցողների Ժամանակավոր տեղավորման կենտրոն) տեղավորման գործառույթը:

Կետ 16 – Կենտրոնում գործող կանոնները:

Այս կետերը ենթադրում են ընդհանուր խոհանոցի/փոքր խոհանոցային հարմարության առկայությունը, ուր բնակիչները կարող են պատրաստել սնունդը:

Պետք է կիրառվի սննդի ֆինանսական սուբսիդավորման և/կամ վաուչերների համակարգ: “Փախստականների և ապաստանի մասին” ՀՀ օրենքի 24-րդ հոդվածում հնարավոր է պահանջվեն փոփոխությունների:

Ներկայումս, առկա է ընդհանուր խոհանոց, որը բաց է բնակիչների համար առավոտյան Ժ. 7-ից մինչև երեկոյան Ժ.10-ը: Խորհուրդ է տրվում այս մոտեցումը շարունակել կիրառել: Խոհանոցի աշխատանքային ժամերը կարող են փոփոխվել՝ երեխաներ ունեցող ընտանիքների կարիքներին համապատասխանելու նպատակով:

9. Ապաստան հայցողների տեղավորումը: “Փախստականների և ապաստանի մասին” ՀՀ օրենքի 24-րդ հոդված:

“Փախստականների և ապաստանի մասին” ՀՀ օրենքի 14-րդ հոդված:

Նշված հոդվածները պետք է փոփոխվեն և կիրառեն ֆինանսական սուբսիդավորման համակարգ այն հայցողների համար, որոնք ունեն նշանակալից պատճառ կենտրոնում չբնակվելու համար:.



10. Լողասենյակներ Կետ 17 – Տեղավորման պայմաններ Յամաձայն տեղավորման պայմանների՝ լոգասենյակները բաց են շաբաթական 3 օր՝ առավոտյան Ժ. 7-ից մինչև երեկոյան Ժ.10-ը:

Ապագա կենտրոնը պետք է ունենա, կամ ընդհանուր, կամ առանձնացված խցիկներով լոգասենյակներ: Մասնավորապես, ընտանեկան հատվածում գտնվող լոգասենյակները պետք է գործեն 24/7 աշխատանքային ռեժիմում:

11. Ֆինանսական օժանդակություն “Փախստականների և ապաստանի մասին” ՀՀ օրենքի 14-րդ հոդված, մաս 2-րդ:

Տրվում է հայցողներին, որոնք չեն բնակվում կենտրոնում: Պետք է ի նկատի ունենալ որոշ փոփոխություններ, այն է՝ տրամադրել ֆինանսական օժանդակությունը առաջնահերթորեն այն հայցողներին, որոնք չեն կարող բնակվել կենտրոնում՝ անվտանգության, առողջության և այլ կարևոր պատճանների առկայության դեպքում:

12. (Նախա)հնտեգրման հնարավորության հասանելիությունը “Փախստականների և ապաստանի մասին” ՀՀ օրենքի 34-րդ հոդված (8.1):

Հայցողների համար կարող են կազմակերպվել լեզվի դասընթացներ, մշակութային վերապատրաստում, առօրյա կյանքին պատրաստվելու համար դասընթացներ, և այլն: Այս նպատակով, կենտրոնը պետք է ունենա բազմանշանակ սենյակ և դասասենյակ: Ներկայումս կենտրոնում գործում է բնակիչներին վերապատրաստելու համար՝ համալրված համապատասխան հնարավորություններով դասասենյակ (բազմանշանակ սենյակ): Այս մոտեցումը պետք է շարունակել կիրառել:

13. Անվճար իրավաբանական օժանդակության հասանելիությունը “Փախստականների և ապաստանի մասին” ՀՀ օրենքի 16-րդ հոդված:

Հայցողները պետք է ունենան հնարավորություն օգտվել անվճար իրավաբանական օժանդակությունից: Այս պատճառով, կենտրոնում պետք է լինի այցելուների համար նախատեսված համապատասխան սենյակ, որտեղ հայցողները կկարողանան զրուցել փաստաբանների հետ առանձնացված պայմաններում: Ներկայումս, կենտրոնում առկա է





հատուկ սենյակ, որտեղ ՄԱԿ-ի ՓԳՅ-ի գրասենյակի, և այլ կառույցների փորձագետները կարող են հանդիպել հայցողների հետ: Այս մոտեցումը պետք է շարունակել կիրառել

14. Կրթություն ստանալու հնարավորության հասանելիությունը “Փախստականների և ապաստանի մասին” ՀՀ օրենքի 25-րդ հոդված:

Հայցողներին հասու է ՀՀ-ում կրթվելու հնարավորություն: Մինչև 7 տարեկան երեխաներին պետք է տրամադրվեն կրթություն ստանալու համապատասխան հնարավորություններ: Այս պատճառով, կենտրոնը պետք է ունենա մանկապարտեզ, կամ օրական խնամքի կենտրոն, կենտրոնում բնակվող երեխաների համար:

Ավելի մեծ տարիքի երեխաները պետք է ունենան հնարավորություն այցելել դասընթացներ, որոնք կազմակերպվելու են կենտրոնում՝ նրանց դպրոցից վերադարձնելուց հետո: Դասասենյակը կարող է օգտագործվել այս նպատակով:

15. Տեղավորման ընթացքում հաշվի առնվող՝ սեռական, ընտանիքների անդամների քանակի, տարիքային և այլ պայմանները

16. Բնակիչների առանձին տեղավորումը ըստ սեռի Կետ 4.7 Ապաստան հայցողների ԺՏԿ -ում (Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոն) տեղավորման գործառույթը:

Կետ 4.12 Ապաստան հայցողների ԺՏԿ -ում (Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոն) տեղավորման գործառույթը:

Կետ 10 Ապաստան հայցողների ԺՏԿ -ում (Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոն) տեղավորման գործառույթը:

Կետ 11 Ապաստան հայցողների ԺՏԿ -ում (Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոն) տեղավորման գործառույթը: Այս գործառույթները ենթադրում են



առանձին սենյակների առկայությունը՝ ընտանիքների, կանանց և տղամարդկանց համար:  
Այս մոտեցումը պետք է շարունակել կիրառել:

Կենտրոնում տեղավորելու ընթացքում տարբեր գործոններ պետք է հաշվի առնվեն:

Այս մոտեցումը պետք է շարունակել կիրառել:

17. Ընտանիքի անդամները բնակվում են միասին “Փախստականների և ապաստանի մասին” ՀՀ օրենքի 25-րդ հոդված, մաս 1:

Ընտանիքի միասնությունը պետք է պահպանվի և ընտանիքի բոլոր անդամները պետք է բնակվեն միասին: Այս մոտեցումը պետք է շարունակել կիրառել:

18. Հայցողները կարող են բնակվել կենտրոնում, մինչև իրենց հարցով վերջնական որոշման կայացման ընդունումը: “Փախստականների և ապաստանի մասին” ՀՀ օրենքի 14-րդ հոդված, մաս 1

“Փախստականների և ապաստանի մասին” ՀՀ օրենքի 24-րդ հոդված, մաս 3

Կետ 4.15 Ապաստան հայցողների ԺՏԿ -ում (Ապաստան հայցողների Ժամանակավոր տեղավորման կենտրոն) տեղավորման գործառույթը:

Կետ 20 Ապաստան հայցողների ԺՏԿ -ում (Ապաստան հայցողների Ժամանակավոր տեղավորման կենտրոն) տեղավորման գործառույթը: Հայցողներին պետք է թույլ տալ բնակվել կենտրոնում մինչև իրենց հարցով վերջնական որոշման կայացումը (ներառյալ դատական ընթացքը):



19. Առանց ինսամբ մնացած երեխաների առաջնահերթային բնակեցումը կենտրոնում “Փախստականների և ապաստանի մասին” ՀՀ օրենքի 24-րդ հոդված, մաս Է

Կետ 4.12 Ապաստան հայցողների ԺՏԿ -ում (Ապաստան հայցողների Ժամանակավոր տեղավորման կենտրոն) տեղավորման գործառույթը: Առանց ինսամբ մնացած երեխաները պետք է բնակեցվեն այլ հատուկ կենտրոններում (օր. անձնող երեխաների ինսամբի): Խորհուրդ է տրվում փոփոխել այս կետը և համապատասխան գործառույթները:

20. Ծխելը արգելող տարածք Կետ 8 – Տեղավորման պայմաններ

Կենտրոնը պետք է հանդիսանա ծխելը արգելող տարածք: Ծխելու համար կարող են հատկացվել հատուկ տարածքներ:

21. Պահակային հսկումը և անվտանգությունը Կետ 2 – Տեղավորման պայմաններ

Կետ 6 – Տեղավորման պայմաններ

Թույլտվություն չստացած անձանց արգելվում է մուտքը կենտրոնի տարածք, որը հսկվում է անվտանգության աշխատակցի կողմից: Այս մոտեցումը պետք է շարունակել կիրառել



Հավելված 3. Ժամանակավոր տեղավորման կենտրոնում նախատեսվելիք ցանկալի ծառայությունների ցանկը

Ծառայության անվանում Դիտողություններ

Ներածական (կողմնորոշիչ) դասընթաց ԺՏԿ ժամանելուն պես ապաստան հայցողների հետ անցկացվում է ներածական (կողմնորոշիչ) դասընթաց, որի ընթացքում նրանց տրամադրվում է տեղեկատվություն հայ հասարակության, ՀՀ իրավական համակարգի և այլնի վերաբերյալ: Ներկայացվում են կենտրոնում գործող կարգապահական կանոնները և կարգավիճակի որոշման ընթացակարգը և դրա հետ կապված՝ ապաստան հայցողների իրավունքներն ու պարտականությունները: Բացի այդ, տրամադրվում են տեղեկություններ հասանելի ծառայությունների վերաբերյալ:

Կողմնորոշիչ դասընթացը կազմակերպվում է բոլոր նոր բնակիչների համար: Դասընթաց կարող է կազմակերպվել նաև կարգավիճակի որոշման ընթացակարգին կամ, օրինակ, բնակիչների իրավունքներին առնչվող հրատապ հարցերի վերհանման և քննարկման նպատակով:

Դասընթացը կազմակերպվում և անցկացվում է կենտրոնի աշխատակիցների կողմից, մինչդեռ ՀԿ-ների և ՄԱԿ ՓԳՀ կողմից կարող է տրամադրվել լրացուցիչ տեղեկատվություն:

Անհրաժեշտության դեպքում կենտրոնից դուրս կարող է կազմակերպվել կենցաղային-մշակութային իրազեկման դասընթաց, որի ընթացքում բնակիչներին կբացատրվի, թե ինչպես հասնել կենտրոն, կատարել գնումներ, գտնել անհրաժեշտ ծառայությունները, օգտվել հասարակական տրանսպորտից, գտնել ՄՊԾ-ն և այլն:

Լեզվի դասընթացներ Բնակիչների հետ պետք է անցկացվեն հայոց լեզվի դասընթացներ, ընդ որում, անհրաժեշտության դեպքում՝ տարբեր աստիճանի բարդության: Լեզվի դասընթացներ պետք է անցկացվեն նաև երեխաների համար: Դրանք կարող են կազմակերպվել ՄՊԾ, ՀԿ-ների և գործընկեր այլ կազմակերպությունների կողմից:

Արհեստագործական դասընթացներ Բնակիչների համար կարող են կազմակերպվել տարբեր բնույթի արհեստագործական դասընթացներ (ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց մասնակցությամբ): Նմանօրինակ դասընթացներ կարող են կազմակերպվել նաև երիտասարդների համար՝ կախված անհրաժեշտությունից: Կարող են կազմակերպվել, օրինակ, խոհարարական, կարուձևի և վարսահարդարման դասընթացներ:



Իրավախորհրդատվություն ՅԿ-ները, ՄԱԿ ՓԳՅ-ն և օրինական ներկայացուցիչները պետք է մշտապես ունենան բնակիչների հետ հաղորդակցվելու և առանձնագրույցներ անցկացնելու հնարավորություն: Անհրաժեշտ է նախատեսել ապաստան հայցողներին իրավախորհրդատվություն տրամադրելու համար նախատեսված համապատասխան սենյակ և տարածք:

Սոցիալական աջակցություն Բնակիչներին կենտրոնի անձնակազմի, ինչպես նաև ՅԿ-ների և գործընկեր կառույցների կողմից պետք է տրամադրվի սոցիալական ուղղվածության աջակցություն:

Սոցիալական ծառայությունների շնորհիվ բնակիչները պատասխաններ են ստանում կենտրոնում իրենց առօրյային առնչվող մի շարք հարցերին, օրինակ.

- Որոնք են իմ իրավունքներն ու պարտականությունները
- Որտեղ գտնել այս կամ այն բանը
- Ինչպես վարվել այս կամ այն դեպքում
- Որտեղ դիմել օգնության համար
- Ինչպես հասնել այս կամ այն վայրը (հիվանդանոցը, դպրոցը, ՅԿ-ն և այլն)

Բնակիչներին պետք է նաև աջակցություն ցուցաբերվի իրենց միջև ծագած վեճերի և տարբեր ինդիվիդների կարգավորման հարցում:

Երեխաների ժամանցի կազմակերպում Անհրաժեշտ է նախատեսել համապատասխան տարածք՝ 6 տ. չլրացած և դպրոցահասակ երեխաների համար տարատեսակ ժամանցային միջոցառումների անցկացման համար: Պետք է անցկացվեն նաև արտադպրոցական միջոցառումներ: Դրանք կարող են կազմակերպվել ինչպես ՄՊԾ, այնպես էլ ՅԿ-ների և այլ կառույցների կողմից:

Սպորտային ժամանց ՄՊԾ, ՅԿ-ների և գործընկեր այլ կառույցների կողմից պետք է կազմակերպվեն սպորտային միջոցառումներ (բացօթյա և փակօթյա) երեխաների և



մեծահասակների համար: Այս նպատակով տարածքում պետք է նախատեսվի խաղահրապարակ կամ մարզասրահ:

Յոթերանական աջակցություն Յոթերանական աջակցությունը կենտրոնի բնակիչներին (այդ թվում՝ երեխաներին) ցուցաբերվում է արհեստավարժ հոգեբանի կողմից: Յոթերանը պետք է հանդիսանա ՄՊԾ կամ գործընկեր այլ կառույցի կամ գերատեսչության աշխատակից:

Յոթերանը պետք է ունենա տեղահանված անձնաց հետ աշխատելու փորձ: Անհրեժեշտության դեպքում ապահովվում է նաև թարգմանությունը:

Յոթերանական աջակցություն ցուցաբերելու նպատակով բնակիչների հետ հանդիպելու համար անհրաժեշտ է նախատեսել համապատասխան սենյակ:

Բժշկական սպասարկում Կենտրոնում անհրաժեշտ է ապահովել բժշկի կամ բուժքրոջ ներկայություն և նախատեսել բուժքրոջ սենյակ (բուժկետ):

Մշակութային (ժամանցային) միջոցառումներ Կենտրոնում անհրաժեշտ է նախատեսել մշակութային-ժամանցային միջոցառումների կազմակերպում ՄՊԾ, ՀԿ-ների կամ գործընկեր կառույցների կողմից:

Այս նպատակով կարող է օգտագործվել գրադարանը կամ բազմաֆունկցիոնալ սենյակը:

Միջոցառումները կարող են լինել բացօթյա և փակօթյա:



#### Հավելված 4 - Փորձագետների առաքելությունը Հայաստանի Հանրապետությունում

Ապաստան հայցողների ՏԺԿ - ի (Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոն) ներդրումային նախագծի ստեղծման փորձագիտական խումբ

(գործունեություն 4.1)

Օգոստոսի 2-4, 2016

Երևան, Հայաստանի Հանրապետություն

Երեքշաբթի, օգոստոսի 2, 2016

13.00 - 14.00

Հանդիպում MIBMA-ի (Հայաստանում միգրացիայի և սահմանների կառավարման աջակցության ծրագիր) փորձագետների հետ:

15.00 - 16.00 Հանդիպում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության Միգրացիոն պետական ծառայության պետ՝ պարոն Գագիկ Եզանյանի հետ:

Չորեքշաբթի, օգոստոսի 3, 2016

10.00 - 13.00 1. Այցելություն գործող ՏԺԿ (Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոն)

2. Հանդիպում անձնակազմի հետ, հարց/պատասխան

3. Նոր ստեղծվող ՏԺԿ-ի հեռանկարային շինարարահրապարակի տարածք:

Հինգշաբթի. Օգոստոսի 4, 2016



10.00 - 11.00

Հանդիպում ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի աշխատակիցների հետ:

14.00 - 15.00 Հանդիպում “Առաքելություն Հայաստան” բարեգործական ՀԿ-ի աշխատակիցների հետ:

16.00 - 17.00

Հանդիպում Հայկական Կարմիր խաչի ընկերության ներկայացուցիչների հետ

Հավելված 5 - Հայաստանի Հանրապետության կողմից ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման սկզբունքները:

Քաղվածք PERCO-ի (Փախստականների, ապաստան հայցողների և միգրանտների Եվրոպական Կարմիր խաչի համագործակցության հարթակ). Ապաստան հայցողների ընդունման Ազգային Կարմիր խաչի և Կարմիր Մահակի ուղեցույցներ, 2001, Էջեր. 23-26:

## 2.6 Տեղավորումը կենտրոնում

Ընդունման կենտրոնները հայցողների տեղավորման միակ տարբերակը չեն: Նրանք կարող են բնակվել ընկերների, բարեկամների մոտ, կամ ընդունող երկրի անձանոթ ընտանիքներում: Ոմանք կարող են իրենք թույլ տալ բնակվել հյուրանոցներում, կամ վարձակալված բնակարաններում: Ընդունող երկրները քաջալերվում են առաջնահերթությունը տալ պետական սուբսիդավորմամբ մասնավոր բնակեցմանը՝ տեղափոխումների բանակի նվազեցման և ավելի ծանոթ և կայուն միջավայրերի ստեղծման համար: Նույնիսկ բնակվելու տարբեր տարբերակներից օգտվելու պարագայում,





հայցողները, անկասկած, պետք է ստանան ընդհանուր աջակցություն, օգտվեն այս ուղեցույցներում նշված իրավունքներից և աջակցման հնարավորություններից: Անհնար է հստակեցնել մանրակրկիտ ուղեցույցներ, որոնք կառնչվեն անհատական բնակեցման շատ տարբեր տեսակների հետ: Ընդունող կենտրոնները, թե պետական կառավարմամբ, թե ՀԿ-ների կողմից կառավարվող, ունեն համեմատելի կառուցվածք և պետք է ունենան համեմատելի չափանիշներ ամբողջ Եվրոպայում: Ակնհայտ է, որ վերոնշյալ կենտրոններում բնակվելու ժամանակատվածը և պայմանները որոշվում են ապաստան ստանալու գործառույթի առանձնահատկություններից:

### Սկզբունք 1. Կենտրոնների տեղակայումը

Չնայաց այն հանգամանքի, որ տարբեր շինություններ կարող են հարմարեցվել ծառայելու որպես հայցողների բնակեցման վայր, պետք է ուշադրություն դարձնել հետևյալ պայմանների վրա. Շինությունները չպետք է տեղակայվեն լարվածության գոտիներում, կամ գտնվեն քաղաքային ենթակառուցվածքներից հեռու: Եթե կենտրոնը գտնվում է հեռու, ապա առկա է վտանգ, որ այն կդիտարկվի որպես մեկուսացված ճամբար, ինչը կարող է բերել հասարակության կողմից երկակի զգացմունքների ձևավորմանը, արհամարողության և նույնիսկ ժխտողականության արտահայտումների:

- Կենտրոնները պետք է ստեղծվեն քաղաքային ենթակառուցվածքներին մոտ:
- Կենտրոնը պետք է կապված լինի գործող տեղական ենթակառուցվածքի հետ: Հեռավորությունը կենտրոնի և հասարակական հաստատությունների (բուժ. կետեր, խանութներ, դպրոցներ, մանկապարտեզներ և այլն) պետք է լինի կառավարելի:
- Կենտրոնները չեն կարող ստեղծվել ռազմական, կամ արդյունաբերական գոտիներում, ռասայական, կամ էթնիկական լարվածության գոտիներում, կամ այն գոտիներում, որտեղ տեղային ազգաբնակչությունն առավել բիրթ է:

### Սկզբունք 2. Փոխհարաբերություններ տեղական ազգաբնակչության հետ

Կենտրոնների մոտ բնակվող ազգաբնակչության հետ լավ հարաբերությունների հաստատումը կենսական կարևորություն ունի և կարող է որոշիչ դեր խաղալ ազգաբնակչության հետ համագործակցելիս: Տեղական համայնքները և կենտրոնների բնակիչները կարող են փոխադարձաբար օգուտ քաղել մտերիմ և լավ հարաբերություններից, ինչը հնարավորություն կտա հայցողներին չզգալ իրենց շատ մեկուսացված, իջեցնել նրանց մոտ ծագող թշնամության, կամ նախանձի



արտահայտումների քանակը, որոնք կարող են ձևավորվել տեղական ազգաբնակչության կողմից տարբեր միջերի հավատալու, կամ թյուրիմացությունների արդյունքում:

- Ընդունող երկիրը պատասխանատվություն է կրում իր քաղաքացիներին՝ հայցողների, որոնք հնարավոր է իվերջո դարնան փախստական, նկատմամբ նրբանկատ վերաբերմունք դրսևվորելու և մեդիա դաշտում ռասիզմի և ատելության դրսևվորումները պատկերելուց զերծ մնալու համար:
- ՉԿ-ները, այս առումով, ունեն կարևոր դերակատարություն՝ հասարակական իրազեկման բարձրացման և հասարակության մոտ փախստականների խնդիրների վերաբերյալ ավելի լայն պատկերացման ստեղծման հարցում:
- Ազգային համայնքները կարող են օգուտ քաղել տեղում գտնվելուց՝ ստեղծելով տեղեկատվական հարթակներ՝ տեղական համայնքների հետ լավ կապեր ստեղծելու նպատակով: Նոր կենտրոն ստեղծվելու ժամանակ, տեղային համայնքին տրվող տեղեկատվությունը պետք է լինի ավելի ծավալուն:
- Կենտրոնի բնակիչների և համայնքի միջև պետք է խրախուսվի հստակ երկխոսություն և պայմանավորվածությունների ձեռք բերում: Սա հնարավոր է անել, օրինակ՝ կենտրոնի աշխատանքների կազմակերպանը մասնակցելու նպատակով համայնքից կամավորների ներգրավմամբ և կենտրոնի բնակիչների կողմից տեղական համայնքային կյանքում մասնակցություն ցուցաբերելու քաջալերմամբ:

### Սկզբունք 3. Տեղավորում

Ընդունման և տեղավորման կենտրոնները հնարավոր է պահանջվեն հրատապ: Հայցողների հետ աշխատող ազգային համայնքները և այլ կազմակերպությունները պետք է պատրաստակամ լինեն ստեղծել նրանց համար բնական մարդկային պայմաններ, ինչքան հնարավոր է շտապ: Առաջնահերթությունը, սակայն, միշտ պետք է տրվի հայցողների կողմից սեփական կյանքի նկատմամբ պատասխանատվությունը ընկալելու գաղափարին:

- Տեղավորման կենտրոնները ստեղծելիս պետք է հաշվի առնվեն մշակութային և կրոնական առանձնահատկությունները և պետք է հարգանքով մոտենան խմբերի, կամ անհատների կրոնական, կամ մշակութային ծեսերի իրականացման կարիքներին:
- Ընդունող և բնակեցման վայրերը պետք է հաշվի առնեն տեղական համայնքի սոցիալական պայմանները և մեծությունը, այսինքն, մեծ կենտրոնը չի կաչով տեղակայվել փոքր համայնքում, կամ ունենալ տեսակ, որը հասու չէ համայնքի համար:



- Պետք է հաշվի առնվեն ջեռուցման պայմանները, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ որոշ մարդիք ավելի զգայուն են ցրտի նկատմամբ: Էլեկտրական լուսավորությունը պետք է տեղադրվի անվտանգության կանոնների պահպանմամբ:
- Ժամանելիս, ամեն հայցողին պետք է տրամադրվի բարձ, վերմակ, ծածկոց, անկողնային սպիտակեղենի երկու հավաքածո և սննդի պատրաստման և օգտագործելու համար անհրաժեշտ պարագաներ:

#### Ննջասենյակներ/հյուրասենյակներ

- Ամեն բնակիչ պետք է ունենա իր սեփական մահճակալը:
- Չափահաս բնակիչները, որպես կանոն, պետք է բնակեցվեն սենյակում, որն ունի առավելագույնը 4 մահճակալ և 6 բառակուսի մետր տարածք ննջասենյակում:
- Յուրաքանչյուր ընտանիքին (ամուսնացած զույգեր երեխաներով, կամ առանց երեխա, միայնակ ծնողներ երեխաների հետ) պետք է տրամադրվի սենյակ՝ բնակվելու համար:
- Երեք սերունդներ ունեցող ընտանիքները (պապ/տատ, զավակ, թոռ) պետք է բնակեցվեն առնվազն երկու սենյակներում:
- Չամուսնացած կանայք և տղամարդիք պետք է բնակեցվեն առանձին սենյակներում:
- Յուրաքանչյուր հայցող պետք է ունենա փակվող պահարան, կամ փակվող դարակ՝ սեփական իրերը ուրիշներից պահելու համար:
- Յուրաքանչյուր սենյակում պետք է լինի խելամիտ չափսի սեղան և 1 աթոռ/բազկաթոռ:
- Բնակիչներին պետք է թույլ տալ զարդարել սենյակը ըստ իրենց նախասիրության (դարակներ, վարագույրներ, ֆոտոպատկերներ, և այլն):
- Բնակիչները պետք է ունենան հնարավորություն իրենց սենյակի դուռը կողքելու:
- Բնակիչներին պետք է տրվի սենյակի բանալի և շենքի բանալին, եթե դրա դուռը փակվում է գիշերը:
- Մուտքը ննջասենյակներ և հյուրասենյակներ, առանց բնակչի թույտվության, արգելվում է՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հանրային անվտանգությունը, կամ



առողջությունը վտանգված են: Բնակիչները պետք է ունենան հնարավորություն իրենց սենյակներում ընդունել հյուրեր, եթե դա չի անհագստացնում այլ բնակիչներին:

Խոհանոցային և սանիտարական տարածքներ

- Բնակիչները պետք է ունենան խոհանոցից օգտվելու և սեփական սննդի պատրաստման հնարավորություն:
- Ամեն կենտրոնում, խոհանոցը պետք է համալրված լինի բավարար տեսակների համապատասխան պարագաներով (առնվազն 1 էլեկտրական վառարան ամեն 8 բնակչի համար և բավարար քանակի սառնարաններ՝ սնունդը պահպանելու համար):
- Բնակիչները պետք է մշտապես ունենան հնարավորություն օգտվելու խոհանոցից (միանշամակորեն ժ. 06-ից 24-ը ): Մայրերը երեխաների հետ և հիվանդ մարդիկ պետք է օգտվեն ծոհանոցից ցանկացած ժամանակ:
- Եթե ինքնասպարկման համար խոհանոցը առկա չէ, ապա սրճարանը պետք է տրամադրի բնակիչներին սնունդ՝ հաշվի առնելով բնակչի սնվելու կրոնական և էթնիկական առանձնահատկությունները:
- Այն բնակիչների համար, որոնք չունեն սննդի պատրաստելու հնարավորություն (տարիքի, կամ սուր/բրոնխի հիվանդություն ունենալու պատճառով), պետք է կազմակերպվի սնունդի պատրաստում:
- Պետք է հաշվի առնվեն հատուկ մշակութային առանձնահատկությունները:
- Սանիտարական հանգույցները, ցնցուղները և լվացքի սենյակները պետք է լինեն առանձին՝ կանանց և տղամարդկանց համար:
- Յուրաքանչյուր սենյակում պետք է լինի լվացարան: Եթե սա հնարավոր չէ, ապա անվազն 6 բնակչի համար պետք է լինի մեկ լվացարան:
- Պետք է լինի առնվազն մեկ ցնցուղ ամեն 8 բնակչի համար:
- Պետք է տրամադրվի մեկ պիսուար և մեկ զուգարանակոնք ամեն 8 տղամարդու համար և մեկ զուգարանակոնք, ամեն 5 կանանց համար:
- Ընտանիքները պետք է ունենան իրենց սեփական սան. հանգույցները:



- Էլեկտրականությունը և հոսող ջուրը պետք է մշտապես հասու լինեն խոհանոցում և սան. հանգույցներում: Բնակիչները պետք է հնարավորություն ունենան կարգավորել ջրի ջերմաստիճանը:
- Բնակիչները պետք է ունենան լվաճքի մեքենաներից և չորանոցներից օգտվելու հնարավորություն:

#### Չանգստի և տեղեկատվական հնարավորություններ

- Կենտրոնը պետք է ունենա ընդհանուր նպատակներով օգտագործման, խելամիտ չափսերի սենյակներ: Մեկ սենյակը պետք է հարմար լինի բնակիչների հանդիպումների և խմբակային աշխատանքների համար:
- Եթե կան եռեխաներ, ապա կենտրոնը պետք է ունենա առնվազն մեկ մանկական սենյակ և մեկ խաղահրապարակ, ինչպես նաև համապատասխան սենյակ՝ աշակերտների տնային աշխատանքները կատարելու համար:
- Առնվազն մեկ ընդհանուր հեռուստացույց պետք է լինի կենտրոնում:
- Բնակիչները պետք է ունենան համապատասխան կապի միջոցից օգտվելու հնարավորություն:
- Պատշաճ և արագ փոստային առաքումը պետք է երաշխավորվի:

#### Սկզբունք 4. Կենտրոնի կազմակերպումը

Պետք է հավաստիանալ, որ, չնայած այն հանագամանքի, որ հայցողները հայտնվել են իրենց համար ոչ նորմալ իրավիճակում, նրանք պետք է ունենան հնարավորինս շատ ուղղակի ազդեցություն իրեն առօրյա կյանքի և ինքնորոշման վրա, ինչպես նաև ունենան կենտրոնի համար կենսական նշանակություն ունեցող հարցերի քննարկմանը մասնակցելու հնարավորություն:

- Ազգային համայնքները պետք է քաջալրեն կենտրոնների ղեկավարներին՝ տալ հայցողներին կենտրոնների ադմինիստրատիվ կառավարման ոլորտում առավելագույն մեծ ներգրավածության աստիճան, հատկապես նրանց, ովքեր գտնվում են կենտրոնում երկար ժամանակ:
- Ժողովրդավարական և ներկայացուցչական “բնակիչների խորհուրդ” պետք է ձևավորել՝ կենտրոնի բնակիչների տարբեր մշակութային, կրոնական և էթնիկական



խմբերի բազմազանությունը արտացոլելու համար: Այս խորհուրդները պետք է հավաստիանան, որ բնակիչները իրենք կազմում են կենտրոնի ադմինիստրատիվ կառավարման անբաժանելի մասը:

- Բնակիչները պետք է նաև մասնակիորեն պատասխանատու լինեն կենտրոնի շահագործման, բարելավման ի կազմակերպման համար:

#### Սկզբունք 5. Միջոցառումներ / գործունեություն

Ընդհանուր գործունեությունը / միջոցառումները սոցիալական կյանքի կարևոր մասն են և այդ պատճառով պետք է կազմակերպվեն կենտրոններում: Այդ միջոցառումները պետք է ուղղված լինեն ժամանցի կազմակերպմանը, տեղեկատվություն ստանալուն և հմտությունների զարգացմանը:

- Խորհուրդ է տրվում, որ միջոցառումների / գործունեության համար հատկացած բյուջեները օգտագործվեն և կառավարվեն «բնակիչների խորհրդի» կողմից (տես Սկզբունք 4):
- Գործունեության համար համապատասխան հնարավորությունները պետք է տեղակայված լինեն կենտրոնի տարածքում:
- Միջոցառումները պետք է կազմակերպեն ճկուն մոտեցմամբ՝ հավի առնելով բնակիչները հետաքրքրությունները և հնարավորությունները:
- Բնակիչները պետք է հնարավորություն ունենան իրագործելու իրենց ունակությունները, օգնելով կենտրոնի անձնակազմին՝ անհրաժեշտության դեպքում հյուրընկալող համայնքի կամավորականների օժանդակությամբ: